«Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր» փաստաթղթի «Եվկուլիդեսյան խնդիրներ» առարկայի «Ուսումնական գործունեության տեսակները» վերնագրի տակ ընթերցում ենք. 1) ուսուցման գործընթացում կախված թնտայից ըստ նպատակաշարժարկության կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝ (այդ տեսակների թիվը 15 է, որոնցից նշենք միայն 6-ը, էջ 80).



- ուսումնական նյութի բացահայտում, լուսարանում.
- մոդելների դիտարկում, օրգանոգրում, պատրաստում.
- նկարների, ֆիլմի օրգանոգրում, դիտում, բնարկում.
- գրաֆիկական աշխատանքների կատարում.
- նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծրագրերի օգտագործում:

Այս խնդրի լուծման ժամանակ իրականացվում է նշված ուսումնական գործունեության բոլոր տեսակները:

4. ABD և CBD տեսակները հավասար են:

Լուծում

Պետք է համեմատենք $\triangle ADB$ և $\triangle CDB$ նրանկյունները, նկ. 2: $AD = CD$, որպես հավասար նիստերի անկյունագծեր:

BD կազմը ընդհանուր է: Մնում է համեմատել AB և CB կողմերի երկարությունները:

Նկ. 3-ից նրևում է, որ այդ հաստվածները հանդիսանում են հավասար ուղղանկյունների անկյունագծեր, ուստիք նա կլինեն հավասար: Այսպեսով մի եռանկյան 3 կողմերը հավասար են մյուսի ներք կողմիկին, ուրևնա նշված առույթը ճշմարիտ է:

5. ABCD բութի ծավալը թվապես հավասար է ABC նրանկյան մակերեսի նուսայտիկին:

Լուծում

Նկ. 3-ից դժվար չէ հասկանալ, որ շտրիխավորած 1, 2, 3 և 4 նախկոնները հավասար են, ուստի

$$S_{ABC} = 1 + \frac{1}{2} \cdot 1 = \frac{3}{2} :$$

ABCD բորգի ծավալը հաշվելու համար, որպես հիմք ընդունենք նախկյուն ABC, իսկ որպես բարձրություն DP-ն, որը հավասար է 1-ի:

$$V_{բորգ} = \frac{1}{3} \cdot S_{\Delta} \cdot h = \frac{1}{3} \cdot \frac{3}{2} \cdot 1 = \frac{1}{2}$$

Այսպիսով S_{ABC} թվապես հավասար է բորգի ծավալի նախադասիկին: Ռիքմմն նշված ստույթը սխալ է:

6. Այդ կետերով անցնող գնդի կենտրոնը $M(0;0;0)$ կետը չէ:

Լուծում

Քանի որ $OA \neq OD$, ապա տնքստում արտահայտված միտքը ճիշտ է:

Ներկայացված լուծումը գուտ ներկայաչափական մեթոդների հետ մեկտեղ պարունակում է նաև օժանդակ մեթոդներ, ինչպես օրինակ, վեկտորների և կոորդինատների մեթոդը: Վերջիններս, մի կողմից, լրացնում են տարածական պատկերացումների քաջթողումներն ու սահմանափակումները և, մյուս կողմից, նպաստում են քացահայտելու էական կապեր երկրաչափության և հանրահաշվի միջև՝ այդպիսով կատարելով միջառարկայական ինտեգրման դեր:

Կրթական առումով մեծ չէ որևէ խնդրի լուծումն իմանալու նշանակությունը: Այնինչ խնդրի պարագայում կրթական հիմնական նպատակն է գիտելիքների օգտագործման միջոցով խնդրի արտահայտած իրադրությունը վերլուծելու, լուծման ուղիներ որոնելու, կողմնորոշվելու, վարկածներ առաջադրելու, կանխատեսումներ անելու, վճիռներ կայացնելու, գործողությունների պլան մշակելու, արդյունքները ստուգելու, գնահատելու, անհրաժեշտ ճշգրտումներ կատարելու, հետևանքները վերլուծելու և այլ կարողությունների ու հմտությունների զարգացումը:

Երկրաչափական հետազոտություններն ունեն մի կարևոր ազդեցություն ևս, որն առնչվում է բարոյական վարքագծի ձևավորման խնդրին:

Տարածական ձևերի և առնչությունների՝ երկրաչափության մեթոդների ճանաչողության մեջ թվանդակային իմաստ է ստանում *իրականների և իրականի* ներդաշնակ փոխհարաբերությունը: Այդ հենքի վրա՝ երկրաչափական մտագործունեության միջոցով ձևավորվում է *ազնվության, արժանապատվության զգացում և սկզբունքայնություն*:

Այսպիսով, երկրաչափությունը մշակութային այնպիսի իրողություն է, որով մարդկային թովանդակությունը միտվել է կատարելության՝ ներդաշնակելով *օգտակարը, ճշմարիտը, գեղեցիկը, արժանապատիվը*: Հենց դրանք են ծառայելու որպես կողմնորոշիչ չափանիշներ կրթության թվանդակության մեջ երկրաչափության բաղադրիչի համար:

Դրան համապատասխան կրթության գործընթացի բնութագրիչները լինելու են՝ *իմացությունը, կիրառությունը, գեղագիտական հաճույքը*:

Резюме

Цель данной статьи - на примере решения одной тестовой задачи ЕГЭ показать:

а) применение разных методов для решения одной задачи, путем осуществления межпредметной интеграции /геометрия, алгебра и т.д./;

б) использование компьютерных технологий для построения необходимых чертежей для решения выбранной задачи;

в) на примере решения этой задачи разъяснить формирование некоторых моральных качеств обучающихся как норм культуры.

Գրականություն

1. Միասնական քննություն, Մաթեմատիկա. Թեևս 2. Եր., 2009.
2. Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր, երկրաչափություն. /Հանրակրթական պվագ դպրոցի չափորոշիչներ և ծրագրեր/: Եր., 2009.
3. А.Б. Василевский, Обучение решению задач, Минск. «Высшая школа», 1979.

ՏՆՆԵԿԱՆԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՐՈՂԱԿՑԱԿԱՆ ՏԵՄԱՈՒՈՒԳԻՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՐ
ՈՍՈՒՑՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՍԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Վ. Վ. Առստամյան

Տննեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներն (ՏՀՏ) ավելի հաճախ են կիրառվում դպրոցներում, դպրոցականների ուսուցման արդյունավետության գնահատման և վերահսկման գործընթացների ավտոմատացման, ինչպես նաև կրեդիտային համակարգով ուսումնառության գործընթացում: Ուսուցիչներն օգտագործում են ինչպես հատուկ մշակված միջոցներ, նպատակադրված մանկավարժական գնահատումների համար՝ համակարգչային տեխնիկայի կիրառմամբ, այնպես էլ դարձյալով կիրառվող էլեկտրոնային հրատարակությունների և ռեսուրսների վերահսկիչ-գնահատող ենթահամակարգեր: Մանկավարժական գնահատումների ավտոմատացման համար ստեղծելով և օգտագործելով համակարգչային միջոցներ՝ կարևոր է հասկանալ, որ այս բոլոր միջոցները և դրանց կիրառման մեթոդները լիստա տարբերվում են՝ կախված գնահատումների և հսկողության նպատակներից:

Գնահատումների ժամանակ գնահատվող նյութերը և միջոցները կոչվում են թեստեր: Այս տերմինը համարյա միշտ օգտագործվում է, երբ խոսքը գնում է գնահատումների ավտոմատացման մասին՝ օգտագործելով տնօրենկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ: Թեստերի ժամանակակից հասկացությունը բավական լայն է և յուր մեջ ընդգրկում է համարյա բոլոր գնահատման նյութերը, որոնք օգտագործվում են դպրոցում՝ անկախ իրենց ձևից և բովանդակությունից:

Գիտելիքների գնահատման նման միջոցի նկատմամբ համընդհանուր հնուաբարբառությունը կանխորոշելիս նրա դրական կողմերը՝

• թեստավորման գործընթացի ձևավորման և միասնականացման բարձր աստիճանը,

• միաժամանակ մի քանի համակարգիչների վրա թեստավորման անցկացման հնարավորություն,

• հնարավորության թեստավորման կազմակերպման հնարավորություն լրկալ համակարգչային ցանցի միջոցով, կամ էլ համացանցի տնօրենկատվական միջոցների օգտագործում: Թեստերը, որպես կանոն, կիրառվում են հսկողության նպատակով: Դրանց օգնությամբ ստուգում են մեկ կամ մի քանի ուսումնական դասընթացների թեմաներն ուսումնասիրած սովորողների գիտելիքների որակը: Բացի դրանից, թեստերի կիրառումը հնարավոր է նաև անմիջապես ուսուցման գործընթացում:

Կրեդիտային համակարգում թեստային նյութի հետ աշխատանքը պետք է կատարել սովորողների գործնական ինքնուրույն աշխատանքի տեսքով, որը թույլ կտա իրականացնել ուսուցում «ուսուցումը ըստ համաձայնության» և «ուսուցումը սնփական սխալների վրա» սկզբունքներով:

Ես վերջապես, թեստային նյութերը կարող են ծառայել որպես գործիքներ, որոնք կիրառվում են ախտորոշման նպատակներին հասնելու համար: Այս դեպքում, կախված թեստավորման արդյունքներից, որոշ բովանդակային, մեթոդական կամ կազմակերպչական միջոցառումներ են ձեռնարկվում, որոնք կարող են դրական ազդեցություն ունենալ ուսուցման որակի վրա:

Թեստերի խմբավորման և թեստավորման ավտոմատացման համար համակարգչային միջոցների կիրառման համար գոյություն ունեն թեստային նյութերի դասակարգում՝ ըստ մակարդակների:

Առաջին մակարդակի թեստերը նախատեսված են դպրոցականի՝ ծուլելու օգնությամբ գործունեության ծավալման կարողության աստիճանի իրականացնելու համար:

Դրանք ճանաչողական թեստեր են (հանձնարարությունը պահանջում է «այո» կամ «ոչ» պատասխան), տարբերակման թեստեր (առաջարկվող պատասխանների մի քանի տարբերակներից յուրաքանչյուրի ճշտության որոշում), դասակարգման թեստեր (խնդրի լուծումը նրկու բազմությունների էլեմենտների հետ համապատասխանեցնելով):

Երկրորդ մակարդակի թևատերը նախատեսված են դպրոցականների՝ հիշողությունը վերարտադրելու և ավելի վաղ յուրացված գործունեության արդյոքիմական ձևերով կիրառելու (կարողության գրևորման համար):

Դրանց են պատկանում *նախապատրաստման թևատերը* (վարժություններում աներաժնչ է լրացնել բազ յոթնված բաղադրուցիչը): *Խոտցողական թևատերը* (տեղ թևատերի հանձնարարությունները պահանջում են հիշողությունից պատասխանի ինքնուրույն վերարտադրություն): *տիպային խնդիրները թևատերը* (խնդիրները կարելի է լուծել յուրացված արգորիթմներ) գործունեության բառացի վերարտադրման կամ կիրառման միջոցով):

Երրորդ մակարդակի թևատերը նախատեսված են էկրիտական տիպի արդյունարար գործողությունների նախապատրաստման գրևորման համար: Դրանք *ոչ տիպային խնդիրներ և իրավիճակներ են* (հանձնարարության մեջ հայտնի է նախտակը, բայց սխաղ չէ իրավիճակը որտեղ կարելի է հասնել նախտակին, պահանջվում է տիպային գործողությունների ու կանոնների նախնական տրանսֆորմացիա և դրանց կիրառում տվյալ, նախնական անձանք իրավիճակում):

Չորրորդ մակարդակի թևատերը նախատեսված են դպրոցականների ստեղծագործական, նոր տնեկատվության ստացման հետազոտական ունակությունների գրևորման համար: Դրանք *թևատ-խնդիրներ են* (հանձնարարություններ, արգորիթմներ), որանց լուծումը հայտնի չէ, և չեն կարող ուղղակի ստացվել նախկինում հայտնի մեթոդների վերակազմման միջոցով):

Բազի դրանից, իրազնկածության գործրնացում կարող են ընդգրկվել նաև թևատային նյութերի խմբեր, որանց կազմված են այդ նշանակությամբ: Մնան խմբերի մեջ մտնում են.

- *ինտելեկտուալ թևատերը*, որոնք կիրառվում են դպրոցականների մուսածության, ճանաչողական գործառայթների զարգացման մակարդակի վերլուծության համար,

- *ընդունակությունների թևատերը՝* նախատեսված դպրոցականների կողմից գործունեության տարբեր տեսակների տիրապետման ունակությունների ստուգման համար,

- *ձևաթրեոր-մաների թևատերը*, որոնց օգնությամբ գնահատվում են դպրոցականների գիտելիքների, կարողությունների, հմտությունների գարգացումը՝ ըստ ուսուցման արդյունքների,

- *անհատավերտության թևատերը*, որոնք ծաայում են դպրոցականների զգայական-կամային հատկությունների գնահատման համար:

Ենակազարծական գնահատումներին ուղղված ՏՏՏ միջոցների կիրառման դեպում աներաժնչ է գնահատել նրանց՝ ընդհանուր միջնակարգ կրթության պետական ստանդարտներին բավարարումը, և դպրոցականների ուսուցման արդյունքների գնահատման նկատման հաշվի առնել *երկու հիմնական մոտեցում՝ հանձնարարությունների կատարում կատրն նորմերի շրջանակներում և նրկորոյր՝ չափանշանների մոտեցումը (նկատել է արնկում դարրոցականների ուսումնական ձևաթրեոր-մաների համմասումը դասրնթուգի արտունակության արնանջանների հմտ):*

Թխատային հանձնարարությունները, որոնք մտնում են ՏՏՏ միջոցների պարունակության մեջ, պետք է համապատասխանեն սպեցիֆիկ պահեսցների համակարգին, որտեղ առաջին հերթին, մտնում են որոշակիության, միանշանակության, պարզության, հուսալիության, ձեխ ճշտության, յոկալ անկախության, տնխնուղղակական և արդյունավետության պատանջները:

Որոշակիության (ընդհանուր մատչելիության) թևտերի պահանջների կատարում աներաժնչ է, ոչ միայն յուրաքանչյուր սովորողի կողմից իր կատարելիքը հսակախալու, այլ նաև ճիշտ պատասխանների բացառման համար, որոնք տարբերվում են չախանումից: Թևտերի պարզության պատանջը նշանակում է, որ թևտը պետք է ունենա մեկ մակարդակի հանձնարարություն և չախեր: Բավարգած լինի յուրացման տարբեր մակարդակ ունեցող մի բանի հանձնարարություններից:

Միանշանակությունը ասիանվում է որպես տարբեր փորձակետների կողմից թևտի կատարման որոակի գնահատման միանմաեություն: Թխտավարման հուսալիության հսակացություններն ընտրվում է որպես յուրացման մակարդակի ճիշտ գնահատման հավանակացություն: Հուսալիության պատանջները կայանում են միևնույն դպրոցականին բացամակ անգամ թևտավորման արդյունքների կայունության պատահվման մեջ:

ՏՏՏ հիման վրա թևտավորման ավտոմատացման համակարգչային համակարգերի կառուցումը, որպես կանոն, կատարվում է՝ հաշվի առնելով հետևյալ փոխերը՝

• **թիստային հանձնարարությունների մշակում**՝ ըստ առանձին դպրոցական առարկաների և այդ առարկաների առանձին թեմաների,

• **թիստային հանձնարարությունների կատարման մշակում,**

• **դպրոցականների ուսումնական արդյունքների ակտորազման** տարբեր մոտեցումների կիրառում,

• **թիստային հանձնարարությունների արդյունավետության ընտրման** չափորոշիչների որոշում և կիրառում,

• **ուսումնական կանխատեսման և վերահսկողության մեջ գիտելիքների վերահսկման** թեմատիկն համակարգերի կիրառման առանձնահատկությունների հայտնաբերում,

• **ուսումնական արդյունքների գնահատման թեմատիկ ակտորազմման և հրազեն-վածության** հնարավոր ճանապարհների արթրագիտ և մշակում,

• **ՏՏՏ վերահսկիչ-գնահատող միջոցների գործնական կիրառման** վերաբերյալ նրաշնչավորումների ձևավորում ընդհանուր միջնակարգ կրթության շրջանակներում:

Ըստ իս. թեմատիկ տեսքով առաջարկված հանձնարարությունների աստվելությունները՝ ավանդական հանձնարարությունների և հարցերի համեմատությամբ, համեղիստում են համառոտությունը, տրամաբանական կառուցվածքը, ստանդարտներին համապատասխանմանը և թեմատիկումն ու դրա արդյունքների գնահատման միասնական և հարաբերական գործընթացը ՀՏՏց այս աստվելությունները թեմատիկ դարձնում են ավելի անհրաժեշտ դպրոցականների ուսուցման արդյունքների գնահատման համար:

Թեմատիկն հանձնարարությունների ներկայացման նման ձևերը մաքսիմալ հեշտացրել են որոնց ձևավորումը և թույլ են տվել ստեղծել մանկավարժական հսկողության և գնահատման գործընթացները ավտոմատացնող ՏՏՏ միջոցներ: ՏՏՏ վերահսկիչ-գնահատող միջոցների կատարման մեջ անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք նրաշնչավորումներ և պահանջներ, որոնք պայմանավորված են ժամանակակից դիդակտիկայով:

Նման միջոցների և տեխնոլոգիաների մշակման մեջ նպատակահարմար է կանխատեսել՝

• **ըստօրենսկանների կառուցման**, նրանց ուշադրության և հետաքրքրության գրավման հատուկ միջոցների ավելացում,

• **ուսումնական նյութի**, հանձնարարությունների և վարժությունների բարդության աստիճանների հաջորդականացում, գնահատում և վերահսկողություն,

• **ընդհանրության գործընթացի** թեմատիկայի թեմատիկայի գործողությունների և միջոցների ավելացում,

• **ընդհանրացնող արդյունքների սխեմայի ավելացում**, որոնք որոշվում են դպրոցականների գիտելիքների գնահատման և վերահսկման արդյունքներով,

• **նշանների և այլ հատուկ սիմվոլների կիրառում**, որոնք արահույժում են ուսումնական նյութի բազադիչները վերահսկող հանձնարարությունների և վարժությունների տեսակների հատուկ տարբերակում,

• **տեսական նկարագրությունների ուղեկցում**՝ գործնական օրինակներով,

• **վերահսկող-գնահատող** նյութերի կառուցում գործնականից կոնկրետ օրինակների հիման վրա,

• **ընդունված նշանների** և տեխնոլոգիայի պահպանում,

• **դպրոցականների կողմից սխալ գործողությունների ուղղման** (վերացման) հնարավորություն ինքնաբերական աշխատանքի միջոցով ինչպես բովանդակային նյութի ուսումնասիրման, այնպես էլ համապատասխան վերահսկող-գնահատող պրոցեսորաների կատարման,

Խոսելով մանկավարժական գնահատումների համակարգում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման (արմատավորման) մասին՝ կարելի է առանձնացնել այն տեսակետները, որոնք դրական ազդեցություն ունեն գնահատման և հսկողության արդյունավետության վրա: Նման տեսակետները նաև պետք է մտնեն ուսուցիչների և աշխատողների նախապատրաստման համակարգի մեջ, որոնք գրադրվում են մանկավարժական գնահատումներով: Նման տեսակետները թվին են դասվում.

✓ յուրաքանչյուր դպրոցականի համար անձնական մանկավարժական գնահատման նախապատրաստման համար տեժանակիր և հնամուլ աշխատանքի կատարումից ազատում,

✓ ուսուցիչին՝ արհեստավարժ գործունեության ստեղծագործական կատարելագործման համար ժամանակի տրամադրում,

✓ ուսուցման արդյունավետության լրիվ և բազմակողմանի ստուգման ապահովում,
✓ մանկավարժական գնահատումների ձևավորման և համամանրեցման բարձր աստիճան,

✓ վերահսկող-գնահատող նյութերի բառացի մշակման և կիրառման մեջ մեծ թվով ուսուցիչների ներգրավում:

Մանկավարժական գնահատումների իրազեկվածության հնարավոր բացասական ազդեցություն կարող է ծագել նրան՝

• համակարգչային տեխնիկայի հետ աշխատող աշակերտների աշխատանքի արագությունը բարձրանա, որն էլ կազդի մանկավարժական գնահատումների արդյունքների վրա,

• համակարգչի վրա դպրոցականների աշխատանքի գործընթացն անհնար լինի պահպանել հաջորդող վերլուծության և գնահատման համար,

• կրթության գոյություն ունեցող ստանդարտները և ուսումնական ծրագրերը չֆիքսն են տեխնիկայի տիպը ու ծրագրային ուսուցման ցուցակը, որոնք օգտագործվում են ընդհանուր միջնակարգ կրթության համակարգում,

• ՏՏ միջոցները հանդիսանան որպես շեղող միջոցներ, ինչը բացասական ազդեցություն կունենա մանկավարժական գնահատումների օբյեկտիվության վրա:

Այսպիսով, ուսուցման մանկավարժական գնահատման համակարգերի հաջող ներդրման համար կարևոր դեր են խաղում նրանք հիմնական խնդիրների լուծումներ՝

Ապացին - գնահատման համակարգերի ստեղծում, ինչպես բովանդակային, այնպես էլ տեխնոլոգիական մակարդակի վրա, որոնք կախված են ընդհանուր միջնակարգ կրթության գոյություն ունեցող պետական ստանդարտներից:

Երկրորդ - կայանում է ուսուցիչների պարտադիր պատրաստման և վերապատրաստման մեջ, մանկավարժական գնահատման ժամանակակից համակարգերի և միջոցների ծանոթացման մեջ:

Երրորդ - կայանում է սովորողների մոտ անբաժնետիրության դեպքում ուսուցման արդյունավետության ստուգման և ինքնաստուգման կարողության ու դրա նկատմամբ ադնկվատ վերաբերմունքի մշակման մեջ:

Резюме

Создавая и используя компьютерные средства автоматизации педагогического тестирования, осуществляются:

- возможность одновременного тестирования нескольких школьников
- возможность организации дистанционного тестирования с применением телекоммуникационных технологий
- обеспечение оперативности и многофункциональности статистической обработки результатов педагогического тестирования.

Գրականություն

1. Ջանվոլայան Բ., Քոմիտյոթերային կիրառական Տեղնալոգիաների Հիմունքներ: Ու. ծեռնարկ. Եր.: «ՎՄԷԼ-ՊՐԻՆՏՏ», 2001.
2. Березин С., Раков С., Internet у вас дома, СПб.: БХВ, Санкт-Петербург, 1999.
3. Коноховского П.В., Колесова Д.Н., Экономическая информатика, Питер, 2000.
4. Демкин В.П., Вымятнин В.М., Принципы и технологии создания электронных учебников. Томск, 2002.
5. Роберт И.В. Современные информационные технологии в образовании. М.: Школа-Пресса 1994.
6. Тальзина Н.Ф., Управление процессом усвоения знаний, М., МГУ, 1984.

ԱՐՅԱՆՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՒՐՏԳ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՔԱՎՈՐ
ԵԹԵՐԱՅՈՒՂԱՅԻՆ ՀՈՒՄՔ

Ա. Է. Ավետիսյան

Ուրց (Ուրց սողազող, Thymus serpyllum L.) Արցախում լայնորեն տարածված նեյրայուդատու և դեղաբույս է: Ուրցի նեյրայուդը օժտված է բազմաթիվ արժեքավոր հատկություններով, որի շնորհիվ լայնորեն օգտագործվում է բժշկության, դեղագործության, կոսմետիկայի և օժանդակների արտադրության բնագավառներում: Ենթևա աշխատանքում կատարել ենք Արցախում աճող ուրցի նեյրայուդի քանակական և որոշ որակական տվյալների հետազոտում:

Ուրցը հանդիպում է նրեք հիմնական տիպերի տեսքով, կախված նեյրայուդի առանձին բաղադրիչների առավելագույն պարունակությունից և դրան համապատասխան նեյրայուդը բաժանվում է նրեք կոմերցիոն խմբերի. թիմոլային տիպ (պարունակում է գլխավորապես թիմոլ), կարվակրոլային տիպ (պարունակում է հիմնականում կարվակրոլ) և կիտրոնային տիպ (նեյրայուդը պարունակում է գիտրալ, լինալոլ և գերանիոլ և ունի կիտրոնի հոտ վարդի նոտայով): Աշխարհում ուրցի նեյրայուդի հիմնական արտադրողներ են Իսպանիան, Մարոկոն, ԱՄՆ, Իրանիան և Չինաստանը: Ուրցի նեյրայուդի գինը միջազգային շուկայում կազմում է 154-ը 52\$ [7]:

Պատմական ակնարկ: Ուրցը մարդկությանը հայտնի է շատ վաղ ժամանակներից: Ավիգեննան բույսից ստացված նեյրայուդը, քսելոլ ձևով, օգտագործել է գլխացավերի, իսկ ամբողջ բույսը՝ բրդեցների, փսխման, ապթմայի, որոզումների ձևով՝ քնրահի խտուշի բորբորումների և անգինայի ժամանակ: Ամիրդովաթը նշում է, որ դեղաբույսը առանձին կամ յուղի, գինու, մեղրի և այլ նյութերի հետ խառնած, քացում է օրգանների լցանումները, մեզը, հալում է ուռուցքները, գորություն տալիս ուղեղին, ստամոքսին, դադարեցնում փսխումը, թրստոսությունը, կնրակրի հետ ուռելուց՝ օգնում է առանցագավին, ապթմային, ուժեղացնում տևողությունը, կանոնավորում շնչառությունը: Հիպոկրատը ուրցն օգտագործել է ակամա միզարձակության բուժման ժամանակ, Ռուֆոսն՝ առանցագավի: Շատ Մարտիրոս Սեբաստիացու, ուրցը պայծառեցնում է միտքը, ուժեղացնում է զգայությունը, կտրում է հազը, իսկ քսել. Գաբրիլյանի, այն օգնում է ականջի ցավին և մարտոլությանը, լեղացավին, մեղացնում օգտագործելուց՝ բուժում է քոսը, մաշկի քորը և դեղությունը: Հայկական ժողովրդական բժշկության մեջ դեղաբույսի սպիրտային թորվածքը կիրառվել է սրտային և նյարդային եփանդությունների ժամանակ, նշվում է, որ այն՝ հակաբորբոքիչ է, վերացնում է քնրահի վատ հոտը և փորկապությունը:

Ուրցը լայնորեն օգտագործվում է ռուսական, ուկրաինական, բուլղարական, գերմանական, ֆրանսիական, ավստրիական, լեհական և այլ ժողովրդական բժշկության մեջ [1]:


Բույսի նկարագրությունը: Ուրցը խոլեղինջագինների կամ շրթնածաղկավորների ընտանիքի պատկանող, 10-30 սմ բարձրությամբ, գետնի վրա փռված, խիստ ճյուղավոր, հիմքում փայտացող ցողունով կիսաթուփ է: Ունի ձվաձև տերևներ: Մաղկաբույլերը հիմնականում գտնվում են ճյուղերի ծայրերին: Բույսը ծաղկում է մայիսից մինչև աշուն, իսկ պտուղները հասունանում են օգոստոս-սեպտեմբեր ամիսներին: Ամբողջ բույսն ունի սուր, համելի, բուրավետ հոտ: Բազմաճյուղ է սերմերով և վեցնոտատիվ նշանակով: Պտղակալում է կանոնավոր, վատ է տանում ջուրը:

Ուրցի հայկական տարածումներն են դաշտուրց, թյում, խոտ, խոտ, դրի դաղձ, վայրի ծղթին, մեջ [1]:


Բույսի տարածվածությունը: Ուրցը տարածված է կովկասում, Ուկրաինայում, Եվրոպայում, Հյուսիսային Ամերիկայում, Միջին Ասիայում և այլուր: Ուրցը շատ տարածված է նաև Արցախում: Այն հանդիպում է մեր հանրապետության լեռնային և նախալեռնային շրջաններում՝ քարքարոտ, արևաշատ լանջերին, բլուրների վրա, տափաստանային և ալպյան մարգագետիններում, դաշտերում և այլուր, հստակ առաջացնելով հոծ ճմուռներ: Նրա օգտակար հատկությունները վաղուց հայտնի են տեղի բնակչությանը, որի շնորհիվ այն լայնորեն

օգտագործվում է ժողովրդական բժշկության մեջ: Ուրցը օգտագործում են նաև բուրավետ թելերի և օշարակների պատրաստման համար:


Եթերայտուղի քիմիական կազմը: Ամբողջ բույսը պարունակում է 0,5-1% եթերայտուղ: Ուրցի եթերայտուղի հիմնական բաղադրիչներից են թիմոլը (մոտ 30%) և կարվակրոլը (15-20%), որոնք օժտված են ուժեղ հականեխիչ հատկություններով: Հակաքիտիկների և մնացած սինթետիկ հականեխիչների հայտնաբերումից առաջ, ուրցի եթերայտուղի բաղադրիչ կարվակրոլը համարվում էր ամենաուժեղ հակամանրէային պրեպարատը: Եթերայտուղերում թիմոլը և կարվակրոլը ուղեկցվում են սպրա-ցիմենի և γ -տերպինենի մեծ քանակությամբ: Ուրցերի որը տայատեսակներ եթերայտուղի բաղադրության մեջ պարունակում են լինալոլ, գերանիոլ, գերանիլացետատ, ցիտրալ, ինչպես նաև α -տերպինենոլ, α -տերպինիլացետատ, 1,8-ցիննոլ, բորնեոլ, ցինգոբերենը, ցիմոլը, տերպինենը և այլն[7]:




թիմոլ



կարվակրոլ



γ -տերպինենոլ



գերանիոլ



Եթերայտուղի կիրառումը: Ուրցից ստացվող եթերայտուղը համարվում է որպես հանգստացնող և խթանող միջոց: Այն արդյունավետ միջոց է վերին շնչառական ուղիների և թոքերի բորբոքային արոցքենների աստմայի, պալարախտի, գրիպի և այլ ցրտառական հիվանդությունների ժամանակ: Եթերայտուղը խթանում է մաքսոդրոյան արոցքենները, վերացնում ստամոքսաղիային սրակտի սպազմերը և քչացնում գազագոյացումը: Լինենոլ հականեխիչ, օգնում է վերքերի, կտրվածքների, այրվածքների, դժվար ապաքինվող վերքերի բուժման ժամանակ: Ուժեղացնում է իմունային պաշտպանության մեխանիզմը: Բարձրացնում է զարկերակային ցածր ճնշումը: Ամրացնում է մազերը և եղունգները: Այն օգտագործում են նյութափոխանակության խանգարման, անքնության, սակավարյունության ժամանակ:

Եթերայտուղը օգտագործվում է հրուշակեղենի և պահածոների արդյունաբերության մեջ, ինչպես նաև պարֆյունիկայում:

Ուրցից ստացվող թիմոլը ուժեղ հականեխիչ միջոց է: Այն նշանակվում է ողողման ձևով բերանի խոռոչի և րկանցքի ախտահարումների ժամանակ: Մտուժատուրգիական պրակտիկայում թիմոլը համարվում է որպես դեմտիոն ցավազրկող միջոց և մտնում է այս նպատակով կիրառող Գարտմանի հեղուկի բաղադրության մեջ: Մաշկային հիվանդությունների պրակտիկայում թիմոլը կիրառվում է սնկային ախտահարումների, էկզեմայի, բազմաթիվ այլ դերմատոսիսների ժամանակ [1,7]:

Փոփոքանական մաս: Եթերայտուղի քանակական պարունակության որոշումը: Ուրցի եթերայտուղը ստանում են ծաղկած բույսի վերգետնյա մասից: Ուրցի թարմ հումքում՝ ծաղկած

կանաչ զանգվածում, եթերայտի քանակական պարունակությունը որոշել ենք Գինգբորգի նդանակով [2]: Ուսումնասիրել ենք նմուշներ Արցախի տարբեր շրջաններից: Եթերայտի քանակական պարունակությունը կազմել է ~ 0.4 մլ/գ:

Եթերայտի որոշ որակական տվյալների հետազոտում: Ջրային գոլորշիներով թորման նդանակով [3,4] ստացել ենք ուրցի եթերայտի որոշակի քանակություն և այն օգտագործել նրա որոշ որակական տվյալների բացահայտման համար: Ուսումնասիրումը կատարել ենք համաառատասխան մեթոդիկաների համաձայն [5]:

Հետազոտման արդյունքում պարզվել է, որ եթերայտն ունի սառեցնող և դառր համ: Նրան բնորոշ է ուրցի թարմացնող հոտը, որը պայմանավորված է եթերայտում թիմոլի ներկայությամբ: Ուրցի եթերայտը սենյակային ջերմաստիճանում բաց դնդնավուն թափանցիկ հեղուկ է, որը երկար պահելուց մգանում է և դառնում ոսկեդեղին:

Եթերայտի թափանցիկությունը պահպանվում է մինչև $+11^{\circ}\text{C}$ ջերմաստիճանը: $+11^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում եթերայտը սկսվում է պոտրվել և դառնալ ոչ թափանցիկ: Ամելի ցածր ջերմաստիճաններում (-15°C -ից -22°C) ի հայտ են գալիս սպիտակ մուսանման փաթիլներ: Դա բացատրվում է եթերայտում թիմոլի մեծ քանակությունների (ավելի քան 40%) առկայությամբ: Ընդ որում բացահայտվել է, որ եթերայտը ցածր ջերմաստիճանների ազդեցությանը ենթարկվելիս, եթերայտի պոտորման ջերմաստիճանը $+11^{\circ}\text{C}$ -ից իջնում է մինչև $+5^{\circ}\text{C}$, որը բացատրվում է հավանաբար նրանում տեղի ունեցող քիմիական բաղադրության անդառնալի փոփոխություններով:

Ուրցի եթերայտի խտությունը որոշել ենք 0,001 ճշտությամբ, պիկնոմետրով, 20°C ջերմաստիճանում, համապատասխան մեթոդիկայի համաձայն [6]: Այն կազմել է 0.928 գ/սմ³:

Եթերայտի լավորակության բացահայտման համար նմուշը ավանդական մեթոդիկայով [5] ենթարկել ենք հետազոտման ըստ սպիրտի, ինչպես նաև ճարպային և հանքային յուղերի խառնուկների առկայության: Ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ ուրցի եթերայտում սպիրտի և ճարպային ու հանքային յուղերի խառնուկներ չեն պարունակվում:

Մեր հոդվածից Արցախի տարածքում ուրցի (Ուրց սողազող, *Thymus serpyllum* L.) տարածվածության և նրանում եթերայտի քանակական ու որակական պարունակության ուսումնասիրումը գույց է տալիս արտադրական մասշտաբներով բույսի օգտագործելու ենթափորությունը:

Резюме

Чабрец обыкновенный, широко распространенный в Арцахе, эфирномасличное их лекарственное растение. Эфирное масло чабреца обыкновенного обладает многими лечевными и другими свойствами. Оно широко используется в медицине, фармацевтической, косметической, парфюмерной промышленности.

В данной работе исследовали количественное содержание и некоторые качественные показатели эфирного масла, полученного из наземной части чабреца обыкновенного, произрастающего на территории Арцаха.

Գրականություն

1. Շորայան Ա. Հայաստանի դեղաբույսերը, 1983, էջ 267-272.
2. Государственная фармакопея СССР. X, 1968, с.816-817.
3. Ավետիսյան Ա. Է. Եթերայտերի ստացումը ջրային գոլորշիներով թորման նդանակով, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, 2008, 1(17), էջ 47-50
4. Сидоров И. И., Турьшьева Н. А., Фалеева Л. П., Ясюкевич Е. И. Технология натуральных эфирных масел и синтетических душистых веществ. М. Легкая и пищевая пром-сть, 1984, 368с.
5. Государственная фармакопея СССР. X, 1968, с.481-483.
6. Государственная фармакопея СССР. X, 1968, с.772.
7. Internet sites: http://www.newt.h1.ru/Katalog_L/kat-0015.htm; <http://www.medicina.kharkov.ua>; http://www.regions_city.ru/gorod/adler/articles/144592.html <http://womanprice.ru/s/z1.pl?neways..139=1>

ՄԱՐՈՒԿԿՈՅԱՆ ՄՈՐՆԻՃ (DOCIOSTAURUS MAROCCANUS)
ԼՂՏ ԷՆՏՈՄՈՖԱՌՆՍԱՅՈՒՄ

Ս.Ս. Աղասյան, Մ.Լ.Ջեանգիրյան

Աշխատանքում քննարկվում է 2008-2009 թվականներին ԼՂՏ հարթավայրային և նախալեռնային գոտիներում մարոկկոյան մորնիսի տարածվածությանը էկոլոգիային և կենսաբանությանը նվիրված որոշ հարցեր:

Մարոկկոյան մորնիսը պատկանում է միջատների դասի (Insecta) ուղղաթևավորների կարգին (Orthoptera): Համաշխարհային ֆաունայում այս կարգում հայտնի է շուրջ 20000 տեսակներ. որոնցից ՀՀ-ում հանդիպում են 160 տեսակներ (1):

Ուղղաթևավորների ֆաունան ԼՂՏ-ում ներկայացվում է երկու ենթակարգերով՝ երկարաբերդներ (Dolichocera) և կարճաբերդներ (Brachycera): Մեր հետազոտության օբյեկտը պատկանում է կարճաբերդ ուղղաթևավորների ենթակարգին և մորնիսների վերնաընտանիքին (Acrididae): Այստեղ ընդգրկված են մոտավորապես 7000 տեսակներ, որոնցից շուրջ 500 տեսակներ հանդիպում են նախկին ԽՍՀ-ի տարածքում (2), իսկ Հայաստանում նկարագրված են շուրջ 105 տեսակներ: Ըստ թրթուրների խտության ձևավորվում են հոտային (մորնիսներ) կամ միայնակ (մորնիսամիջատ) ձևեր, որոնք միմյանցից տարբերվում են վերնաթևերի զարգացմամբ (2):

Աշխատանքի համար որպես նյութ է ծառայել ԼՂՏ տարբեր շրջաններից հավաքված մարոկկոյան մորնիսները: Նրանց էկոլոգիան ուսումնասիրելու համար ընտրել ենք ստացիոնարներ (քարոնգ), տեսակային կազմի որոշման համար օգտագործել ենք որոշիչներ (3,4): Կատարել ենք մորֆոմետրիկ չափումներ և օգտագործել ենք հետևյալ հապավումները՝ ՄԵ-մարմնի երկարություն, ՎԹԵ - վերնաթևերի երկարություն: Չափումները կատարել ենք կենդանաբանության մեջ ընդունված կենսաչափական մեթոդներով (5):

Մարոկկոյան մորնիսը լայնորեն տարածված է Միջին Ասիայում, Ղազախստանում, Կովկասում, Արևմտում, Ռուսաստանում, Իրանում: Այս մորնիսի մարմնի երկարությունը 22-38մմ - է, երանգը՝ շնկ դեղնավուն է. մուգ հետքերով: Առաջնակրծքի վրա կա բաց խաչանման նկար, վարդագույն կամ դեղնավուն ազդրեր ունի և հետին ոտերից կարմիր սրունքներ: Ձվադրում է սովորաբար այնպիսի տարածքներում, որի բուսականությունը հիմնականում կազմում են էֆնեմերային բույսերը: Այդպիսի պայմաններում ձվերի քանակը 1մ² վրա կարող է կազմել 1500-6000: Թրթուրային զարգացման ողջ շրջանը կազմում է 25-30 օր:

Թևավորումից 3-10 օր հետո սկսում է գուգալորումը և ձվադրման պրոցեսը:




Նկար 1. Մարոկկոյան մորնիս *Dociolestes maroccanus*:

Թևավորումից անմիջապես հետո մարոկկոյան մորնիսը սկսում է կատարել միգրացիա, թռչելով ձվադրման վայրից դեպի ավելի խոնավ, հարուստ բուսականությամբ տարածքները, որտեղ և նա սնվում է: Հիմնական պայմանը, որը նպաստում է այս մորնիսի մասսայական

բազմացմանը, դա ծմնած ձվերի զարգացման և թրթուրների դուրս գալու ժամանակ գարնանային հորդառատ անձրևներն են (մոտավորապես 100 մմ): Ինչպես նշում է Բ.Պ Ուվարովը հոտային մորեխների մոտ նկատվում է բավականին յուրահատուկ մի երևույթ, որը կոչվում է փուլային փոփոխականություն (11): Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ միջատների կուտակման աստիճանի և զարգացման մի շարք այլ պայմանների փոփոխության հետ կապված փոխվում է միջատի արտաքին տեսքը և ֆիզիոլոգիական մի շարք ֆունկցիաները: Ջարգացող առանձնյակների մեծ կուտակումների դեպքում առաջանում է հոտային փուլը, իսկ կտրված պտույլացիաներում զարգանալու դեպքում՝ միայնակ փուլը: Նույն տնտեսի այս երկու փուլերը իրարից տարբերվում են առաջին հերթին արտաքին տեսքով: Համարում են, որ ավելի բնական է միայնակ փուլը, որի դեպքում առանձնյակները ապրում են ցրված և պտույլացիայում նրանց խտությունը ցածր է: Գոյություն պայմանների փոփոխության դեպքում (խոնավության պակաս, ջրասկանության չորացում) այս մորեխները անցնում են հոտային փուլին: Թրթուրները հավաքվում են քավականին մեծ խմբերով (կուլիզներ): Առանձնյակների այսպիսի հարկադրված կուտակումը բերում է նրանց միջև սնրտ շփումների, որի արդյունքում առաջանում է հատուկ պայմանական ռեֆլեքս՝ հոտային ռեֆլեքս: Հոտային կենսակերպը բարձրացնում է նյարդային համակարգի գրգռականությունը և փոխում է օրգանիզմում նյութափոխանակության ուղղվածությունը: Ընդ որում մորեխների էգերը գրգռվում են ոչ միայն անմիջական մշխանիկական շփումների արդյունքում, այլ նաև արտի մաշկային ծածկույթների կողմից արտադրվող հատուկ հորմոնի՝ ֆերոմոնի միջոցով: Փոխվում է նաև ներզատիչ գեղձերի գործունեությունը, բարձրանում է շնչառության ինտենսիվությունը և շարժունակությունը: Հոտային փուլի առանձնյակները տարբերվում են միայնակ փուլի առանձնյակներից ավելի մեծ չափերով և սովին դիմակայելու մեծ ընդունակությամբ: Առանձնյակների կուտակումը կուլիզներում և հետևելու միաժամանակ ազդում է առանձնյակների բնորոշության վրա և էապես իջեցնում է այն:

Այսպիսով անհրաժեշտ ենք համարում նշել, որ մորեխների հոտային փուլին անցնելը տնտեսի գոյատևման համար օգտակար հարմարանքների մի ամբողջություն է, որը հնարավորություն է տալիս նրանց գոյատևել անբարենպաստ պայմաններում: 2008թ-ին [ԼՀ տարածքում մարտկիցյան մորեխները հանդիպել են միայն միայնակ փուլում: 2009թ-ին գարնանը [ԼՀ-ում նոյն է անձրևոտ և ցուրտ: Եղանակային պայմանները էապես ազդել են այս մորեխի զարգացման տևողության վրա: Մարտ ամսում տեղումները նոյն են տարեկան միջին նորմայի ասիմետրերում, այնինչ ապրիլ և մայիս ամիսներին նոյն են հորդառատ տեղումներ, որոնք գերազանցել են նորման: Դաշտային հետազոտությունների և անմիջական հավաքների միջոցով որոշել ենք, որ նշված ժամանակաընթացքում անձրևային և ցուրտ նոսրանակների պատճառով մարտկիցյան մորեխի թրթուրները դուրս են եկել որոշ ուշացումով (ապրիլի 20-27-ին) և նրանց քանակը հասել է մաքսիմումի ապրիլի 30-ին (տես գրաֆիկ): Ինչպես երևում է տղորե քնված գրաֆիկից երկրորդ հասակի թրթուրները դուրս են եկել մայիսի առաջին տասնօրյակում: Երրորդ հասակի թրթուրները հայտնվել են մայիսի 9-10-ին: Չորրորդ հասակի թրթուրները հայտնվել են մայիսի 15-ին և նրանց քանակը հասել է մաքսիմումի մայիսի 20-ին:




Իմագոյի առաջին թռիչքը արձանագրել ենք մայիսի վերջից:

2009 թվականին մարտկոյան մորելիք Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջան դաշտերում և այգիներում բալվականին մեծ վնաս է հասցրել, քանի որ բնակլիմայական պայմանները նպաստել են նրա հոտային փուլի անցնելուն: Այս տնտեսի պոպուլյացիաները առավել արագ տարածվել են Մարտակերտի շրջանի Այգնատան և Լեռնարխ տնտեսաներում: Այս մորելիք միայնակ փոխում մեր կողմից հայտնաբերվել է նաև մյուս ստացիոնարներում, ամենք ներկայացնում ենք բարձրագույն: Կառավարության կողմից հայտարարվել է արտակարգ իրավիճակ, օգտագործվել է բնակչության, զինծառայողների և փրկարար ծառայության թուր ուժերը: Մորելները զգալի վնաս են հասցրել դաշտային կուլտուրաներին: Նրանց ու պայքարում օգտագործվել են այնպիսի մեթոդներ ինչպիսիք են՝ այրելը, թունաքիմիկատներ օգտագործումը և փորվել են հատուկ խրամատներ:

Ընդհանրապես մարտկոյան մորելիք մասսայական բազմազման ժամանակ որպես սնունդ օգտագործում է համարյա բոլոր տնտեսի խոտարոյսները: Մեր կողմից կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ այս մորելիք ավելի մեծ վնաս հասցրել է հացազգիներին, քանի որ նրա առաջին հասակի թրթուրները սնվում են բազառապես հացազգիներով: Այդ պատճառով, որ Մարտակերտի շրջանում

Ստացիոնարների և տարածման արեալների քարտեզ



1. Մարտակերտ, 2. Ասկերան, 3. Ծուշի, 4. Մարտունի, 5. Հաղորյք:

● - Մարտկոյան մորելիսի տարածման արեալները

1 հա-ից սպաւոյղ 22 ցնտններ բերրի փոխարեն հավաքել են ընդամենը 19 ցնտններ բերք: Տնտնտնայանը հասցվել է մեծ վնաս:

Սկսած նրկրորդ հասակից բացի հացազգիներից թրթուրները սկսում են սնվել նաև բարդածաղկավորներով և գաղտրիկազգիներով: Երրորդ և չորրորդ հասակի թրթուրների սննդային արցիոնում ավելանում են շրթնածաղկավոր և բակլազգի բույսերը: Հասուն առանձնյակները օգտագործում են նույն բուսատեսակները ինչ որ թրթուրները: Հետազոտությունների արդյունքում մեր կողմից հավաքված մորելաների մարմնի մակերևույթին հայտնաբերել ենք էկտոպարազիտներ՝ կարմիր տզեր: Կատարել ենք մորֆոմետրիկ չափումներ, որի արդյունքում ստացվել է, որ Մարտակերտի ստացիոնարից հավաքված առանձնյակները զգալիորեն ավելի մեծ են, քան մյուս ստացիոնարներում հավաքվածները:

Մարտկոյան մորելի մորֆոմետրիկ չափումները ներկայացրել ենք աղյուսակում:

**Մարտկոյան մորելի (*Docostaurus maroccanus*)
մորֆոմետրիկ չափումները մմ-ով**

	n	min-max	X	δ	m _x	Cv%	mδ	t
Մե	10 ♂	22-30	26	4	1.25	15.4	0.8	2.5
	10 ♀	32-42	37	5	1.56	13.2	1.11	4.5
Վե	10 ♂	26-34	30	4	1.56	13	0.88	4.54
	10 ♀	38-42	40	2	0.62	5	0.44	4.54

Մարտկոյան մորելի դեմ պայքարը մեզ մոտ սկսվել է որոշ ուշացումով և տարվել է միայն ֆիզիկական ու քիմիական միջոցներով, մինչդեռ այս վնասատուի դեմ պայքարը ավելի արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է համալիր միջոցառումներ և դրանք պետք է օգտագործել ոչ թե առանձնափակ տարածքում, այլ նաև ընդգրկել հարակից տարածքները:

Բավականին էֆեկտիվ է օգտագործվող Ադոնիս պրեպարատը, որը ապահովում է 99,6-100% արդյունավետություն:

Резюме

Марокканская саранча, которая имеет весьма широкое распространение во всем мире, считается одним из самых опасных сельхозвредителей. Она нередко доходит до территории Закавказских государств. Некоторые одиночные фазы этого вредителя на территории нашей республики мы навели в 2008 году. Однако природно-климатические условия 2009-го года способствовали массовому размножению этого вида и его перехода в стадию фазы. В итоге, марокканская саранча нанесла большой вред сельскому хозяйству республики.

Հրականություն

1. Հայաստանի բնաշխարհ Ե. 2008:
2. Биологический энциклопедический словарь. М. 1986.
3. Мамаев Б.М. и др., Определитель насекомых европейской части СССР М.,1976
4. Э.Г.Явруян, М.К. Арутюнян. В.Т. Айрапетян - Определитель классов, подклассов и отрядов наземных членистоногих Армении и Нагорного Карабаха 2007.
5. Пантелева Н.Ю. Математические методы в зоологии, Воронеж 2003.
6. Записи натуралиста, Мир беспозвоночных, с. 34-36, 2007.
7. Насекомые и другие маленькие животные М., с.30, 2007.
8. Насекомые. Полная энциклопедия. М., с. 68-82, 2008.
9. <http://www.cultinfo.ru/fulltext/1/001/007/121/>
10. <http://tetrix.narod.ru/acr.html> - Определитель подсемейств
11. <http://bse.sci-lib.com/article093855.html> - Прямокрылые

ԲԱԿԱԼԱԳՐԻՆԵՐ /FABACEAE/ ԸՆՏԱՆՆԻՔԻ COLUTEA, ASTRAGALUS, GENISTA ՑԵՆԵՐԻ
ՏԵՍԱԿԱՅՅԻՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ

Կ. Վ. Բալայան

ԼՂՀ ֆլորայի ուսումնասիրության և պահպանության անհրաժեշտությունն անմիջականորեն բխում է շրջակա միջավայրի պահպանության գլոբալ հիմնախնդիրներից: Ընդ որում, բուսական աշխարհների պահպանության հիմնական խնդիրը բուսական աշխարհի տեսակային բազմազանության ամբողջության ապահովումն է: Սույն աշխատանքում ներկայացվում է ծածկանյութների /Angiospermae/ գերիշխող ընտանիքներից մեկի՝ բակլագինների/Fabaceae/ ընտանիքին պատկանող Պայթակենի/Colutea/, Գագ/ Astragalus/, Դեղնածաղիկ/Genista/ գեղերի տեսակային բազմազանությունը և տարածվածությունը ԼՂՀ-ում:

Նշված ընտանիքին պատկանող գեղերի տեսակային կազմի վերլուծության համար հիմք են հանդիսացել մեր կողմից կատարված բուսաբանական ուսումնասիրությունները, դաշտային հետազոտություններն ու բուսանմուշների հերթադիտմային հավաքները, որոնք ներկայացված են զբանգված են ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի բարձրակարգ բույսերի կարգաբանության բաժնում:

Բակլագինների / Fabaceae, Leguminosae/ ընտանիքն ընդգրկում է շուրջ 500 գեղի պատկանող ավելի քան 12 հազ. տեսակներ, որոնք տարածված են երկրագնդի ամենատարբեր բուսաշխարհագրական մարզերում: Կովկասում հանդիպում են շուրջ 550 տեսակ, որոնք տերևաթափ և մշտադալար ծառեր, թփեր, կիսաթփեր ու լիաններ են, միայնա, բազմամյա խոտաբույսեր/1/:

Սույն աշխատանքում նշված Պայթակենի գեղն ընդգրկում է մոտ 15 տեսակ՝ տարածված Հարավային Եվրոպայում և Ասիայում: Հայաստանում բնականորեն աճում է պայթակենու 3 տեսակ՝ Պարսկյան/*C. orientalis* Mill/, Պ. կիլիկյան/*C. cilicica* Boiss. et Bal. /, Պ. կոմարովի/*C. Komarovii* Takht. // 2/:




Նկ.1 Պ. կիլիկյան/*C. cilicica* Boiss et Bal./

ԼՂՀ տարածքում մեր կողմից կատարված բուսաբանական ուսումնասիրությունների և դաշտային հետազոտությունների քննազրույցում գրանցվել է Պ. կիլիկյան/*C. cilicica* Boiss. et Bal./ տեսակը/նկ.1/, որը տարածված է հանրապետության ստորին և միջին լեռնային գոտիներում: Բուսանմուշները հավաքվել են Հաղորթի, Ասկերանի, Մարտունու, Ծուշիի շրջանների տարածքներից, մշակվել, որոշվել և հերթադիտմային նյութը ներկայացվել է ՀՀ ԳԱԱ Բուսաբանության

ինստիտուտի բարձրակարգ բույսերի կարգաբանության բաժնի:

Պայթակենին տերևաթափ թուփ է, կենտ փնտրած և տերևներով: Ծաղիկները ծոցային են, խոշոր, դեղին՝ հավաքված ողկույզներում: Ծաղիկները բազմում են մայիս-օգոստոս ամիսներին: Պտուղն ունի է՝ բշտիկանման, կիսաթափանցիկ և բազմաանրմ: Պտուղները հասունանում են հուլիս-հոկտեմբեր ամիսներին: Պայթակենին չորադիմացկուն է, լուսասեր և ջերմասեր: Աճում է չոր, բարրաբուս լեռնալանջերին:

Հայաստանի բուսական աշխարհում տարածված հանդիպող գագի /Astragalus/ ավելի քան 100 տեսակներից 15-ը հանդիսանում են թփեր, երբեմն՝ կիսաթփեր, որոնք մասնակցում են արիդային գոտու դեմոդոֆլորայի ձևավորմանը /2/: Գագերը աչիպազան չորադիմացկուն են, լուսասեր, հողի նկատմամբ քիչ պահանջկոտ: Հիմնականում տարածված են չոր լեռնալանջերին, բնորոշ են լեռնաչորասեր բուսական տարբեր խմբավորումների կազմում /3/:



Նկ.2 Գ. մանրագլխիկ
A. microcephalus Wild/

արյունաբերության մի շարք ճյուղերի համար: Ազատագործվում է նաև բժշկության մեջ/ 4/:

Հայաստանի և Ադրբեջանի ֆլորայում հայտնի են Դեղնածաղիկ կամ Օրոճ /*Genista*/ գեղին պատկանող 2 տեսակ՝ *O. ներկատու*/*G. tinctoria*/ Նկ. 3/ և *O. անդրկովկասյան*/*G. transcaucasica*/ /1,4/: Նշված տեսակները տարածված են նաև ԼՂՀ տարածքում /Հատրուշի, Քաշաթաղի, Շուշիի շրջաններ/: Հանդիպում են հանրապետության ստորին և միջին լեռնային գոտիներում: Աճում են անտառների բացատներում, թփուտներում, գետերի և գետակների ափերին: Ներկատու /պարունակում են դեղին ներկանյութեր/ և դեղատու են, ինչպես նաև գեղեզաբույս/5/:

ԼՂՀ տարածքում առավել տարածված են Գ. մանրագլխիկ/ *A. microcephalus* Wild/Նկ.2/, *A. fragrans* Wild, *A. macrostachus*, *A. canallatus* Bunge տեսակները: Նշված բուսատեսակների հերթաբերումային նմուշները, որոնք հավաքվել են Ասկերանի, Շուշիի, Քաշաթաղի շրջանների տարածքներից, գրանցված են ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի կարգաբանության և բարձրակարգ բույսերի աշխարհագրության բաժնում:

Թփանման գազերը լայն տարածում ունեն և օժտված են բարձր տնտեսական արժեքով: Դրանց ցողունը և ճյուղերը պարունակում են թանձր խեժ, որն արևոտ և շոգ օրերին արտառնում է բույսի վերքերից: Գազի խեժը կարևոր նշանակություն ունի



Նկ.3 *O. ներկատու*
G. tinctoria

Резюме

В данной работе представлен видовой состав и распространение в НКР Пузырник/*Colutea*/, Астрagal/*Astragalus*/, Дрок/*Genista*/ родов одного из преобладающих семейств покрытосеменных – семейства бобовых/*Fabaceae*/.

Գրականություն

1. И. И. Карягин, Флора Азербайджана, 5 том, Баку, 1954.
2. Ժ. Հ. Վարդանյան, Մասագիտություն, Եր., էջ 167-1762005
3. Ս. Ա. Բաղդյան, Հայաստանի կենսաբազմազանություն, Եր., 1999:
4. Հ. Մ. Այվազյան, Հայաստանի բնաշխարհ, Եր., 2006:
5. Я. Мацку, И. Крейча, Атлас лекарственных растений, Братислава, 1972.

ՄԱՆԻ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՐՈՇ ԲՈՒՅՄԵՐԻ
 ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՏ ՏԱՐԱԾՔԻՄ

Մ.Մ. Մատրյան

Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը կազմում է հայկական բարձրավանդակի հյուսիս - արևելյան և Փոքր Կովկասի հարավ- արևելյան մասը: ԼՂՏ տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1100 մ: Տիպիկ լեռնային բնույթի հետևանքով, Լեռնային Ղարաբաղում լավ է արտահայտված բնական պայմանների ուղղաձիգ գոտիականությունը: Դրա համապատասխան էլ բնութագրվում են ոչ միայն կլիմայական պայմանները, այլև հողերի տիպերն ու բուսականության տեսակները:

Բազմազան է ԼՂՏ - ի բուսական աշխարհը: Այստեղ աճող բուսատեսակները հասնում են նրկու հազարի: [Մ. Մ. Մելքումյան, 1990]: Լեռնային Ղարաբաղում լերկ ժայռեր շատ քիչ կան, բացառությամբ բարձր լեռնագագաթային մասերի: Ղարաբաղի լեռները ծածկված են անտառներով, թփուտներով կամ խոտային բուսականությամբ: Ծովի մակերևույթից մինչև 300 – 350 մ բարձրություն ունեցող տափաստանային մասերում գերակշռում են անապատային և կիսաանապատային տիպի բուսատեսակները: Այս վայրերում տարածված են հատկապես օշինդրը, ուղտափուշը, ոգնախոտը, երնջակը, տերեփուկը: Խոտային բուսականությունը հարուստ է նախալեռնային շրջաններում: Շատ ափնի բազմազան են միջին լեռնային մինչև 1500 մ բարձրություն ունեցող գոտու բուսատեսակները: Այստեղ հատկապես տարածված են թիթեռնագզի խոտաբույսերը, թրթնջուկ սովորականը (*Rumex acetosa*) ավելուկ զանգուրը (*Rumex crispus*), մատիտեղ հանգուցատորը (*Polygonum nodosum Pers.*), աստղիկը (*Stellaria media*), կակաշ քնաբերը (*Papaver somniferum*), ծապաշարը (*Capsella bursa pastoris*) և այլն: Սույն աշխատանքում որպես հմտ գոտման օբյեկտներ դիտարկել են հորթավնգու լազուր /*Anchusa azurea*/, Խոզակնճիթ լյոզնիլ



Քարտեզ 1
 Ուսումնասիրվող բույսերի տարածվածությունը ԼՂՏ-ում
 Δ հորթավնգու լազուր
 ○ Խոզակնճիթ լյոզնիլի
 ■ կակաշ քնաբեր

/*Sisymbrium loeselii* L/, կակաչ քնաքեր /*Papaver somniferum*/ տեսակների մոքիոլոգիական կազմությունը և տարածվածությունը ԼՂՀ տարածքում: Տեսակային կազմի որոշումը իտականացվել է ՀՀԳԱԱ բուսաբանության ինստիտուտում: Նյութի հավաքումը իրականացվել է աղշավայրային մեթոդներով: Հետազոտությունների էկոլոգիական դիտարկումները, բուսանմուշների հավաքումը կատարել ենք բուսաբանության մեջ ընդունված դասական մեթոդներով [A.Л.Техтаджян, 1980]: Ուսումնասիրության արդյունքները արտացոլվում են քարտիկ թ.1-ում:

Ընտանիք – Boraginaceae

Տեսակ - Հորթալեզու լազուր

- *Anchusa azurea*=*Anchusa italica* Retz.



Գաղտրիկազգիների ընտանիքին պատկանող միամյա կամ բազմամյա խոտաբույս է: Ուղիղ կանգնող ճյուղավոր ցողունի վրա ունի երկտիպ տերևներ. ստորինները՝ երկարավուն -- նշտարածն են և ցողունի մոտ խիստ սեղմված, իսկ վերինները ավելի մեներ են, նստադիր կամ գրկող: Ամբողջ ցողունը ծածկված է կոպիտ մազիկներով, բարձրությունը՝ մինչև 70/100սմ: Արմատն առանցքային է: Զարգարարական կապտամանուշակագույն ծաղիկները ոլորածն հավաքված են հուրանանման ծաղկաբույլում, ծաղիկները հնգատիպ են, ծաղկապսակը ձագարածն է, որի նրակը ծածկված է հատուկ թմբիկներով, վերջիններս ծածկված են թավշյա մազիկներով, որը և շնչուում է բույսի գարդարարական տեսքը: Պտուղը քաղընկուզիկ է: Ծաղկում է մայիս - օգոստոսին [A.Л.Техтаджян, 1980]: Աճում է աղբոտ վայրերում և դաշտերում: Երիտասարդ տերևներն օգտագործվում է ժողովրդական սննդի մեջ:

Տեղական աճուներն են պոպալորս, խոխոկ:

Ընտանիք – Cruciferae

Տեսակ - Խոզակնճիթ Լյոզելիի

- *Sisymbrium loeselii* L.



Պատկանում է խաչածաղկավորների ընտանիքին: Յողունը կանգուն է, ճյուղավորվող, նոսր մազմզուկաձածկ, բարձրությունը՝ 20–70 սմ: Տերևները հերթադիր են, փետրաբաժան: Ծաղկաբույլը ողկույզ է, ծաղիկները՝ վառ կամ բաց դեղին: Ծաղկում է ապրիլ – մայիսին: Պտուղը պատիճ է, սերմերը՝ մանր: Պարունակում են գլիկոլիդներ, որոնք ճեղքվելով՝ առաջացնում են սուր հոտով և համով մանանիխայուղեր: Աճում է ամենուր, բանջարանոցներում, հացահատիկի ցանքերում, ճանապարհների եզրերին, աղբոտ

վայրերում [В.С. Новиков, 2008]: Երիտասարդ տերևներն օգտագործում են սննդի մեջ:
Տեղական անուններն են շաղգամ, պիլսկուկ:

Ընտանիք - Papaveraceae

Տեսակ - Կակալ քնարեր

- Papaver somniferum



Կակալազգիների ընտանիքին պատկանող միամյա խոտաբույս է: Տերևներն ունեն հերթադիր դասավորություն, լայն երկարավուն, փնտրածև կտրտված, մոխրականաչավուն գույնի տերևաթիթեր: Ծաղկում է զարնանից աշուն: Ծաղիկները խոշոր են, մրայնակ, նրկար ծաղկակոթուններով, մեկ թույսի վրա ձևավորվում են 1–20 հատ ծաղիկներ: Կոկոն ժամանակ ծաղկակոթունները կորացած են, ծաղիկները բազմվելու ժամանակ ուղիղ կանգնող: Բաժակը երկթերթ է, ծաղիկները բազմվելու ժամանակ բաժակաթերթերը թափվում են ծաղկաթերթերը 4–ն են՝ ազատ վարդագույն առնջները շատ են: Պտուղը ձվաձև կամ համարյա գնդաձև, բավական սնանկ սերմերով, չբազմող տուփիկ է: Սերմերն ունեն մուգ գույն: Աճում է հացաբույսերի, կերաբույսերի զանրերում, արոտներում, խոտհարքներում: Սննդի մեջ օգտագործում են երիտասարդ տերևները [Ռ.Ս. Կարապետյան, 1980]: Տեղական անուններն են պուտուտկուն, խաշխաշ:

Резюме

В данной статье представлены морфологическое строение и распространённость некоторых дикорастущих съедобных растений флоры НКР.

Գրականություն

1. А.Л. Тахтаджян, Жизнь растений, М., Просвещение, т. 5(1), 1980, 218с.
2. В.С. Новиков, И.А. Губанов, Атлас определитель дикорастущие растения, М., 2008, 201с.
3. В.А. Петров, Этноботаника Нагорного Карабаха, Баку, 1940. 93с.
4. Ջ.Ն. Հովհաննիսյան, Կանաչ դեղատուփ, Եր., 2005, էջ 199, 250:
5. Ս.Ս. Մելքումյան, Լեռնային Ղարաբաղ, Եր., 1990, էջ 9-14:
6. Ռ.Ս. Կարապետյան, Բուսականության հայերեն-լատիներեն բառարան, Եր., 1981, էջ 7,4:
7. Ռ.Ս. Կարապետյան., Հայաստանում տարածված մոլախոտերի առյուծ, Եր., 1980, էջ 54:

ԲՈՒՅՄԵՐԻ ՉՈՐԱԴԻՍԱՑԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՈԳԵԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄԸ ԼԱՌՈՐԱՏՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ա. Ն. Հակոբյան

Բույսերի հարմարողական ռեակցիան անբարենպաստ պայմաններում տարբերությամբ է: Որոշ բույսեր նրաշտից խուսափելու համար իրենց օրգանիզմում կուտակում են ջուր (կակտուսները), վալանցիկները (էֆեմերները և էֆեմերոիդները) կրճատում են վնասատիների սևառնությունը, մի խումբ բույսեր էփուլացայի ընթացքում ձեռք են բերել խորը թափանցող արմատային համակարգ: Սակայն առավել կարևոր է դիմացկունության այն ձևը, երբ բույսերն անբարենպաստ պայմաններում վերականգնում են մետաբոլիկ պրոցեսները՝ փոփոխելով դրանց ուղղությունը ու արագությունը, ցուցաբերում են այնպիսի ռեակցիա, որը նպաստում է վերականգնված կենսական պրոցեսների արդյունավետության անկման:

Բույսերի դիմացկունությունը, ըստ Պ.Ա.Գենկելի բնութագրվում է այն բանով, թե անբարենպաստ պայմանների ազդեցության տակ որքանով է փոխվում դրանց արդյունավետությունը օպտիմալ պայմանների համեմատությամբ (1):

Դիմացկուն բույսերը կարողանում են հարմարվել միջավայրին փոփոխելով գիտալպացմայի մածուցիկությունը, Լյաստիկությունը, հիդրատացիայի աստիճանը, թափանցելիությունը, էլեկտրական լիցքը, pH-ը, ֆոտոսինթեզը, շնչառությունը և այլն:

Չորադիմացկուն են այն բույսերը, որոնք ընդունակ են անհատական զարգացման (օնտոգենեզի) ընթացքում հարմարվելու չորության ներգործությանը և այդ պայմաններում իրականացնելու աճ, զարգացում, վերարտադրություն:

Ճիշտ է, անբարենպաստ պայմաններին բույսերի դիմակայելու հատկությունը ժառանգական բնույթ է կրում, սակայն մյուս կողմից, այն փոփոխական է:

Որոշ երկրներում, որոնք ունեն չորային (արիդային) կլիմա, բույսերի չորադիմացկունության հիմնահարցը հանդիսանում է իրատալ նշանակություն ունեցող խնդիրներից մեկը:

Բույսերի չորադիմացկունության գնահատման համար հաճախ օգտվում են լաբորատոր մեթոդներից, որոնցից է՝ բույսերի չորադիմացկունության և շոգեկայունության գնահատումը ստատոլիտային օսլայի պարունակության հիման վրա (2):

Ստատոլիտայի օսլան գտնվում է բույսի արմատապաստանում և այն բույսի կենսագործունեության ընթացքում գրեթե չի ծախսվում: Բույսերի մեջ նրա պարունակությունը բավականին կայուն է: Սակայն պարզվել է, որ բարձր ջերմաստիճանի և ջրազրկման դեպքում տեղի է ունենում նրա հիդրոլիզ: Չորային պայմաններում ստատոլիտային օսլան մեծ չափով ծախսվում է, հիդրոլիզվում է քիչ դիմացկուն բույսերի մոտ: Որոշելով օսլայի մնացորդային քանակը, կարելի է դատել տարտի դիմացկունության մասին:


Հնուագոտությունը կատարվել է ցորենի տարբեր սորտերի վրա, որոնք ցանվում են Արցախի տարածքում:

Փորձերը կատարվել են ԱրՊՀ-ի կենսաբանության ամբիոնի լաբորատորիայում՝ 3 կրկնողությամբ, որոնք համեմատվել են ստուգիչի հետ:

Պետրի թասի մեջ, խոնավ քամիչ թղթի վրա 25 °C պայմաններում ծլնցրել ենք սնրմը: 2-3 օրվան ծիլերի չորադիմացկունությունը որոշելու համար չորացրել ենք խոնավագեղձիկում (էքսիկատորում) գլիցերինի լուծույթի վրա (100մլ ջուր և 37մլ գլիցերին)՝ 16-17 °C-ի պայմաններում, 24 ժամ տևողությամբ, կամ NaCl-ի լուծույթի վրա (100մլ ջրին 8 գ աղ), 24 ժամ տևողությամբ, 20-21 °C պայմաններում: Փորձերը կատարվել են սուրճ պայմաններում (թերմոստատում):

Չորադիմացկունությունը որոշելու համար ծիլերը պահել ենք 37 °C ջրում՝ 1 Ժ տևողությամբ: Տարագումը կամ չորացումը ավարտելուց հետո գլխավոր արմատի ծայրը 2-3 մմ երկարությամբ կտրել ենք և ներկել Լյուգոլի լուծույթով (յոդի 1% լուծույթը կալիումի յոդիտում) 30 վրկ տևողությամբ:

Ստուգիչում ներկել ենք առանց տարացման և ջրազրկման ենթարկված բույսի արմատների ծայրերը: Արմատները ներկելուց անմիջապես հետո մանրադիտակի տակ դիտել ենք: Փորձի արդյունքները տրվել է տոկոսներով՝ ստուգիչի համեմատությամբ: Օսլայի պարունակությունը արմատապատյանում, որը դիտվել է մանրադիտակի տակ, ցույց է տրվում նկ.1-ում:



Նկ.1 Օսլայի պարունակությունը արմատապատյանում

Ըստ հիդրոլիզված օսլայի քանակության հետազոտվող սորտերը բաժանվել են 3 խմբերի՝

ա) բարձր դիմացկուն՝ օսլայի հիդրոլիզը մինչև 35%,

Ջրասաշրջիկ - ճանապարհորդների թիվն աշխարհում աճելով արդեն հասնում է տարեկան շուրջ 600 մլն- ի: Ջրասաշրջության համաշխարհային կազմակերպության (ՋԿԿ) նախատեսումների համաձայն՝ 2010 թվականին աշխարհում այդ թիվը կհասի մոլ մլրդիարդի սահմանը (ներկանգնողի քնակչության թիվն այսօր ավելի քան 6, 3 մլրդ է) [4]:

Ջրասաշրջությունը փաստորեն դարձել է տնտեսության առանճանախատուկ ոլորտ, որտեղ առյալյան գործում են տնտեսական զարգացման արտադրության արդյունավետության բարճագուման, արժեքի, պահանջարկի ու առաջարկի, գնագնացման և մյուս օրենքները: Այս ոլորտում ձևավորվում, որոշվում են նաև շուկայական հավասարակշռություն, անվականատիրական հարաբերություններ, տնտեսական զարգացման այլապի խնդիրներ:

Տնտեսագիտական և տնտեսաշխարհագրական առումներով զբոսաշրջությունը՝

- ա) հասարակական հարաբերությունների որոշակի և յուրատեսակ ակրոզություն է արտադրանքի թողարկման, փոխանակման և բաշխման ոլորտներում,
- բ) թվալակ նրկիրի ժողովրդատնտեսական համալիրի մի մասն է՝ տնտեսական գործունեության նեղ մասնագիտացված որոշ տեսակներով,

զ) տնտեսագիտական բնագավառ է, որն ուսումնասիրում է գրոսաշրջությունը որպես որևէ տարածաշրջանի կամ նրկրի տնտեսության ոլորտ,

դ) հասարակական գիտություն է, որն ուսումնասիրում է գրոսաշրջային ապրանքի արտադրությունը, փոխանակությունը, բաշխումն ու սպառումը,

ե) ժամանակակից տնտեսագիտական ունևություն է, որն ուսումնասիրում է մարդկանց վարքագիծը գրոսաշրջության բոլոր բնագավառներում,

զ) տնտեսական սուբյեկտ է, գրոսաշրջային ծառայությունների սպառող:

Ջրասաշրջությունը տնտեսական համալիր է, որի զարգացումն առավելապես բացատրվում է համաշխարհային տնտեսական գործընթացներով ու հարաբերություններով, արագ զարգացող նրկրներից շատերի տնտեսության աճի կարևորագույն խթանիչ է, որն ապահովում է օտարերկրյա կապիտալի հոսք, նոր աշխատատեղերի ստեղծում:

Ժամանակակից գրոսաշրջությունը, որպես տնտեսական գործընթաց, ունի մի շարք առանձնահատկություններ.

ա) ունի արդյունաբերական կառուցվածք և ներկայանում է գրոսաշրջանային ապրանքի ու ծառայությունների տնկրով, որոնք հնարավոր չէ կուտակել ու սովորական ապրանքի նման տեղափոխել տրանսպորտով,

բ) ներդրված կապիտալի արագորեն փոխհատուցվում է,

գ) ՀՆԱ-ի աճի, զբաղվածություն, տեղական ենթակառուցվածքների ձևավորման և տվյալ տարածաշրջանի բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևոր պայմաններից է:

Բացի այդ, գրոսաշրջությունը մշակութային ժառանգության և բնակչության պահպանության արդյունավետ միջոց է, քանի որ հենց նշյալ տարրերն են ոլորտի ռեսուրսային հիմնական բազան, և գործնականում համառոտորեն, կապակցում է տնտեսության բոլոր բնագավառները:

Այս առանձնահատկություններից ելնելով՝ կարելի է ընդգծել, որ մեծ է գրոսաշրջության դերը յուրաքանչյուր նրկրի ազգային տնտեսության և, առհասարակ, տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Հետևաբար կարևոր է միջազգային գրոսաշրջության համակարգում Հայաստանի Հանրապետության, ապա նաև՝ ԼՂՀ տեղի ու դերի գնահատումը:

Հայաստանի Հանրապետությունը և ԼՂՀ-ն իրենց բնական պայմանների, ինչպես նաև մշակութային, պատմաճարտարապետական անգուգական կոթողների շնորհիվ ի գորտ են ներգրավվելու միջազգային գրոսաշրջության գլոբալացման գործընթացում: Դա հնարավորություն կտա մեր արժեքները ներկայացնելու ողջ աշխարհին՝ պահպանելով ազգային դիվիդենդն ու յուրահատկությունները:

Ինչպես նշել ենք, Հայաստանի Հանրապետությունում և ԼՂՀ-ում միջազգային գրոսաշրջության զարգացման նախադրյալները բազմազան են. կան ինչպես բնական, այնպես էլ մարդածին զգալի ռեսուրսներ, որոնք կալուղ են բավարարել գրոսաշրջության և հանգստի արդյունաբերության զարգացման ժամանակակից պահանջները: Այդ տնտեսկետից չափազանց զբավիչ են վաղոց ձորը, Սյունիքը, Լոռին, կրտայրի ու Արարածոտնի մարզը Հայաստանում, Ծուշին, Մարդակները և Քարվաճառը ԼՂՀ-ում՝ իրենց բնական (հանքային ջրեր, տնտարծան վայրեր...) ու պատմամշակութային (նկղեցիներ, յաշքարեր...) հուշարձաններով: Առանձնակի շահեկան դիրք է զբաղում Սևանի ավազանը, հատկապես ներգնա տուրիզմի համար: Թեև վերջին տարիներին հյուրանոցների, ճանապարհների կառուցման, վերանորոգման զգալի աշխատանքներ են կատարվել, այնուամենայնիվ հանգստի և զվարճանքի ոլորտների ռեսուրսները միջազգային գրոսաշրջության զարգացման համար դեռևս մնում են անբավարար. ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ ԼՂՀ-ում:

Պետք է նկատել, որ միջազգային գրոսաշրջության զարգացումը ՀՀ -ում և ԼՂՀ-ում չեն կարող ընթանալ իրարից անկախ: Զարգացման գործընթացները կրում են իրար հետ խիստ փոխկապակցված բնույթ: Ուստի կարևոր է.

ա) միջազգային տուրիզմի համար անհրաժեշտ համապատասխան ռեսուրսների միաժամանակյա ստեղծում նրկու տարածաշրջաններում;

բ) միասնական գնային քաղաքականության մշակում,

գ) միջազգային տուրիզմի որոշելի մասնագիտացում և:

Հայաստանում միջազգային գրոսաշրջություն սկսվել է զարգանալ հիմնականում 1950-ականներից հետո: Մասնավորապես, 1985թ. արտերկրներից (առաջը ԽՍՀՄ) ևտրիզային Հայաստան է այցելել 70 հազար, իսկ 1987թ.՝ 100 հազար գրոսաշրջիկ: ԽՍՀՄ փլուզման և հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանների հետևանքով 1990-ական թվականների սկզբներից հանրապետություն այցելող գրոսաշրջիկների թիվը կտրուկ կրճատվել է (1996թ.՝ 13 հազար), որից հետո նորից սկսել է աճել՝ 1999թ. կազմելով 40 հազար: Նշենք նաև, որ մինչև 1980-ական թվականները նախկին ԽՍՀՄ հանրապետություններից ևտրիզային Հայաստան է այցելել տարեկան միջինը 300 հազար գրոսաշրջիկ: Ջրասաշրջության

եղի և նվազման նմանատիպ տնտեսություններ նկատվել են նաև ԼՂՀ-ում և կազմել 1999թ. 2500 շրջաշրջինը:

1996 թվականից հետո տարածաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքի կայունացման ժամանակն ազդեցին նաև միջազգային զբոսաշրջության զարգացման տեմպերի վրա: 2000 թվականից սկսած «Հայաստանում օտարերկրյա զբոսաշրջիկների հիմնական հանգրվան վայրն էր հայ», «Երևան» հյուրանոցների արմատական վերակառուցումից բացի, զբոսաշրջատուրյունում սկսեցին կառուցել բարձրակարգ, միջազգային չափանիշների համապատասխան հյուրանոցներ: Սկսած 2001թ-ից Նոր ժամանակակից հյուրանոցների շարքայում սկսվեց իրականացվել նաև ԼՂՀ-ում:

Հայաստանի Հանրապետությունում միջազգային զբոսաշրջության մի քանի կարևոր ցուցանիշներ (2003-2006թթ.), հայտարարում բերված է ԼՂՀ տվյալները, չհաշված ՀՀ-ից ժամանածները[5]

Աղյուսակ 1

	2003թ հունվար դեկտեմբեր	2004թ հունվար դեկտեմբեր	2005թ հունվար հունիս	2006թ հունվար դեկտեմբեր
Վտանոցների քանակը զբոսը ընդունել են միջազգային զբոսաշրջիկները	14/4	28/6	27/8	29/10
Ժամանոցներ ժամանել են ուղևորներ, զբոսը ըստ ԶՀԿ վերջնականության ամսաթվում են զբոսաշրջիկ)	155000/8000	186000/10000	200000/12000	230000/14000
Վտանոցի անդամություն տարածությունում և ինտերնացային կազմակերպություններում	27500/6500	33000/8200	40000/10800	45200/12000
Զբոսավաճառի կամ հարկատու տանը, զբոսով տրվող բնակարաններում և այլն	127500/1500	153000/1800	160000/1800	184800/2000
Վտանոցային հաճախել են Հայաստան և ԼՂՀ	6200	7500	9200	11000

Նկատելիորեն փոխվեց նաև սպասարկման մակարդակը, աշխուժացան տարածաշրջանային ավտոնոմությունների կառուցումն ու վերակառուցումը զբոսաշրջությունը փաստորեն ամբողջապես դարձավ մասնավոր ձեռնարկների գործունեության ոլորտը, ստեղծվեցին զբոսաշրջային ըստմանով կազմակերպություններ: Մասնավորապես, հանրապետության արևելքի ու տնտեսական զարգացման նախարարության զբոսաշրջության վարչության տվյալներով՝ 2003 թ. հանրապետության պետական ձեզիստրում գրանցված էր 4800 կազմակերպություն, որոնցից սակայն իրականում գործում էր 150- ը, իսկ ԼՂՀ-ում գրանցված էին և գործում էին նմանատիպ 8 կազմակերպություն: Երեք և ավելի աստղային 29 հյուրանոցները սկսեցին հանրապետության կազմում ընդունել 2700 հոգու:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում և ԼՂՀ-ում հատկապես 2003- 2006 թթ. միջազգային զբոսաշրջության բնագավառում կատարվել են զգալի տեղաշարժեր (տես աղյուսակ 1):

Աղյուսակից երևում է, որ ընդամենը չորս տարում տարածաշրջանային զբոսաշրջիկների թիվը 163 հազարից հասել է 244 հազարի, իսկ հանրապետությունից մեկնած զբոսաշրջիկներինը՝ 130 հազարից 142.8 հազարի:

Կարևոր է, որ աշխուժանում է նաև հանրապետության ներքին զբոսաշրջությունը (տես աղյուսակ թիվ 2):

Հայաստանում ներքին զբոսաշրջիկների թիվը նույնպես տարեցտարի աճում է՝ 2003թ. 121.3 հազարից 2006թ. հասնելով 135.2 հազարի: Ուստ որում, նրանց 38,6 % շրջագայել են յոթնական, 29,8%-ը՝ հանգստի և ժամանցի, 3,0%՝ բուժման, 36,6%-ը մարզական, մշակութային, կրոնական և այլ նպատակներով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետություն և ԼՂՀ այցելող զբոսաշրջիկների ավելի քան 32,5%-ը ԱՊՏ երկրներից են, այդ թվում շուրջ 19,8%-ը՝

Ռուսաստանի Դաշնությունից, 4.5 %-ը՝ Վրաստանից: Եվրասիայի միջին երկրներին բնորոշվում է համապատասխանաբար զգալիորեն ավելի բարձր 25.4 %-ը: Շատ են հաստատվում Ֆրանսիայից (4.9%) և ԱՄՆ Բրիտանիայից (7.7%) ժամանակները: Այս թվով զբաղվողներն են ժամանում նաև ԱՄՆ-ից (17.3%) Իրանից (3.8%), Լիբանանից (3.4%), Կանադայից (2.7%) այլ երկրներից (շուրջ 18.5%):

Հայաստանի Հանրապետության ներքին գրասաշրջության մի քանի գուցանիշներ (2001-2003թթ.)

Աղյուսակ

	2003թ հունվար դեկտեմբեր	2004թ առաջին կիսամյակ	2005թ. հունվար դեկտեմբեր	2006թ. հունվար դեկտեմբեր
Ընդամենը գրասաշրջիկներ	121300	126200	130400	135200
դրոնցից բառնապատակի՝ գործնական	45.181	25.403	49.199	20.569
հանգստի և ժամանցի	25.516	6.328	28.864	7.190
բուժման	3.491	6920	6005	3079
այլ	47112	87549	46322	104362
այդ թվում այցելվել են հՀ-ից ԼՂՀ	4520	6280	7520	8250

2003թ. տվյալներով գրասաշրջությունից ստացված նկատուտը հՀ-ում կազմել է շուրջ 200 մլն ԱՄՆ դոլար, որը հանրապետության նույն տարվա ՀՆԱ-ի շուրջ 8.1%-ն է: Այդին վիճակագրական հաշվարկով՝ յուրաքանչյուր գրասաշրջիկ հանրապետությունում ծախսում է շուրջ 1000 դոլար:

Ուրախալի է, որ տարեցտարի ավելանում է Հայաստանի հետ գրասաշրջային կապեր ունեցող երկրների թիվը (առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տվյալներով՝ այդպիսիք 90-ն են):

Հարապետություն այցելող գրասաշրջիկները սովորաբար հանգրվանում են մայրաքաղաքում: Այժմ հանրապետության մարզերում արդեն կան գրասաշրջային 49 հանգրվաններ:

1997 թվականից Հայաստանի Հանրապետությունը Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության անդամ է, որը հնարավորություն է ընձեռում առիթն օգտագործելու, որպեսզի գրասաշրջության մեր ազգային արժեքները մատչելի դառնան համաշխարհային հանրությանը: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է այդ ոլորտը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին և ներդրելով կառավարման ժամանակակից մեթոդներ: Ըստ որում, ձեռնարկված միջոցառումների ու բարեփոխումների նպատակը պետք է լինի այն, որ միջազգային գրասաշրջության համակարգում ստեղծվի մրցունակ բնագավառ: Դրա համար անհրաժեշտ է, որ հայկական գրասաշրջային կազմակերպությունները, ընկերությունները, գործակալություններն ունենան ժամանակակից պահանջներին համապատասխան առաջավոր տեխնոլոգիաներ և հնարավորություն: Կյուրանոցներում պետք է ներդրել համակարգչային ցանցով ղեկավարման ամենաժամանակակից մեթոդներ, ինչը հնարավորություն կընձեռի առանց քաշքշուկների ժամանակին կազմակերպել պատվերների գրանցում, գույքագրում, հաշվառում, հաշվապահական և այլ գործընթացներ:

Հայաստանի Հանրապետությունում գրասաշրջային արդյունաբերության զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել ժամակալական հետևյալ միջոցառումները.

- Ձևավորել գրասաշրջության զարգացման բարենպաստ իրավական դաշտ:
- Միջազգային օդային կապերի ծառայությունները կազմակերպել ժամանակակից պահանջներին համապատասխան:
- Հանրապետության գրասաշրջության տնտեսությունը (առավելապես վիճակագրություն) արդիականացնել՝ օգտագործելով համակարգչային տեխնիկա ու տեխնոլոգիաներ:
- Հանրապետությունում հաճախակի կազմակերպել գրասաշրջային, արդյունաբերական, գյուղատնտեսական, առևտրային միջազգային ցուցահանդեսներ, տոնավաճառներ, հյուրանոցային համարներն ու գրասաշրջության ժամանակակից հանգրվաններ կառուցել միջազգային սպասարկման չափանիշներին համապատասխան:

- Պատրաստել բարձրորակ մասնագետներ, հրատարակել մայրենի լեզվով համապատասխան գրականություն (մեծագրություններ, ձեռնարկներ, դասագրքեր, մեթոդական ցուցումներ), բազմալեզու ուղեցույցներ, մշակել զբոսաշրջության զարգացման համապետական և տարածքային ծրագրեր:
- Միջազգային զբոսաշրջության շուկաներն ուսումնասիրելով՝ ծավալել Հայաստանի Հանրապետությանը վերաբերող գովազդա-տեղեկատվական աշխատանքներ:
- Պետական և մասնավոր ներդրումներն ուղղել հանրապետության տարածքում սիրված պատմաճարտարապետական նշանի կոթողների վերականգնման, դրանց շրջապատի ու տրանսպորտային ուղիների կարգավորմանը, ստեղծում համապատասխան կարծաժամկետ սպասարկման օբյեկտների ստեղծմանը:
- Պետական առանձնահատուկ հոգածություն ցուցաբերել Սևանա լճի բնապահպանական վիճակի կարգավորման, Սևանա ավազանի տարբեր հատվածներում հայկական խոհանոցային կենտրի, հայկական հնագույն արհեստի ու արվեստի ցուցադրման մեծ հետաքրքրության արժանի առարկաների, հուշանվերների արտադրության համալիրների կազմակերպման խնդիրներին:
- ՀՀ զբոսաշրջության զարգացման գործին մեծապես կնպաստեն հանրապետության նարդածին ու բնական ռեսուրսները, դրանց վերաբերյալ մատչելի ուղեցույցների, նկարագրող այբուսնների, սկավառակների ստեղծումը, ինչպես նաև համակարգված գործունեությամբ միջազգային զբոսաշրջության համակարգին ինտեգրումը:

Այսպիսով, որպեսզի Հայաստանի Հանրապետությունը դառնա միջազգային զբոսաշրջության գեներալի տարածաշրջան, անհրաժեշտ է համալիր ձևով գնահատել ու արժեքավորել առկա բնական և մարդածին պաշարները, դրանք մատչելի դարձնել միջազգային զբոսաշրջությանը: Իսկ ժամանակակից գիտատեխնիկական մեթոդներով այդ ռեսուրսների առահատումը և օգտագործումը միջազգային զբոսաշրջությունը կդարձնեն հանրապետության ռեսուրսային նկատման արժանի և արդյունավետ կարևոր աղբյուրներից մեկը՝ նպաստելով բնակչության առողջապահության հիմնահարցերի լուծմանը:

Резюме

В статье рассматриваются основополагающие концепции развития туризма в республике Армения и НКР, проводится сопоставление темпов изменения различных инфраструктур способствующих развитию туризма, динамика изменения международного и внутреннего туризма до 2006 года в регионах. Даются также и рекомендации, которые способствовали бы дальнейшему развитию туризма и могли бы стать основой для разработки государственной политики развития туризма в НКР.

Գրականություն

1. Ծ. Հարությունյան- Ձրոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, Եր., 2004:
2. Մ. Մելիքումյան- Ընդհանուր տնտեսագիտական աշխարհագրություն, Եր., 2004.:
3. Н. И. Кабушкин - Менеджмент туризма, Минск, 2001.
4. С.А.Семенички - Экономика туризма, Минск, 2001.
5. «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2006թ, հուլիս - հունվար», տեղեկատվական ամսական զեկույց, ՀՀ ԱվԾ, Եր., 2006թ.

Վ.ՍԱՐԴՅԱՆԸ ԵՎ ՀԱՄԱԵԽԱՐՀԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Վ. Գրիգորյան

Համաշխարհային գրականության բոլոր մեծությունները մի հիմնական ճանապարհով են ներկայացել ժողովուրդներին, դարձել նրանց իմաստուն գրույթակիցներն ու սերունդներին ուղեկցող մարգարեներ: Նրանք իրենց ազգային ոգու քառով մտել են համամարդկային հոգևոր աշխարհի, կենսատեսաբան գաղափարների կանթեղով: Ելյալով դարձել հանրա մարդկության լսողի, բարության, ճշմարտության և արդարության քահակալներ: Մակայն լինում են բացառություններ: Հանդես են գալիս արվեստագետներ, որոնք համամարդկային եզրվոր տաճար են մտնում գուցահեռ երկու ուղիներով: Նման արվեստագետներից է աշխարհափոխ Վիլյամ Սարոյանը, որը համարվում է 20-րդ դարի ամերիկյան գրականության հանձարտ ներկայացուցիչներից մեկը և ոչ պակաս՝ հայ մշակույթի:

Արմատներով հայ գրկված պապենական ավանդական երկրից, ծնված ԱՄՆ-ում գաղթականի ընտանիքում, սնված համաշխարհային մշակույթի հոգևոր հացով, Վ. Սարոյանը գրական հենց առաջին փորձերում խոսեց համամարդկային գաղափարների և հույսերի մասին, ինքնատիպ ու բազմերանգ երկերի շնորհիվ իր տեղը գրավեց այնպիսի հայտնությունների կողքին, որպիսիք են Լեննաո Հեմինգուեյը, Ռիլյամ Ֆոլքերը, Թոմաս Վուլֆը և այլ մեծություններ: Մակայն նա երբևէ չնոտացավ նահապետ Հայկից իր նախնիներին ավանդված «էին հայրենիքը» որն իր համար արդեն «կորուսյալ երկիր» էր, այսպես կանչելով դարձավ իր ժողովրդի անանց ցավ արտահայտիչներից մեկը, մի քանի անգամ այցելեց յաթաղանից փրկված փոքրիկ Հայաստան, հանդիպեց և գրուցեց իր եր անվանի, եւ պարզ ու հասարակ հայրենակիցների հետ և կարտալուս հայատությանը բարձրասնանց, որ ինքը հայրենի հողից արմատահան եղած տոհմաձայն պտուղ է, որ ինքն ամերիկյան միջավայրում հասակ նետած ստանի է, որի գուշակող շշուկներն ծփում են անգլերեն ներկայացնելով իրեն որպես ամերիկյան գրող, սակայն եզուր խորանում հնչում է այն օրհներգը, որ դողաբերում է ազգային պատկանելության ու արժանապատվության սրբազան զգացումների գույմարով: Նրա սրտից ճառագեց այն ծիածանը, որ Ֆրեդսոն կամրջեց Երևանին և ծնորդ դնելով կործին՝ որդիաբար հայտարարեց. «Թե՛ն անգլերեն կգրեմ ու թե՛ն ծննդով ամերիկացի եմ, քայց ինքզինքս կըհամարեմ հայ: Իմ գործածած բառերը անգլերեն են, միջավայրը, որում մասին կը գրեմ Ամերիկան է: Ոգին, սակայն, որ զես գրելու կը մղե հայկական է: Ուստի, նա հայ գրող եմ: Ես հայտար եմ հայ ժողովրդի ազնվականությանը, արվությունը, իմագականությանը, ուժով, պարզությանը, սրամտությանը, նրա հանձարով ու խիզակությունը»:

Վ. Սարոյանն իր այս խոստովանությանը ձեռնոց նետեց այն կարծիքին, ըստ որի, գրողը որ չեզվով գրում է, պատկանում է այդ գրականությանը: Եվ իր այդ նոր մտածումը հետադարձ հայկական երանգներով հյուսած գեղարվեստական հունձրով: Միաժամանակ նա իր ստեղծած բազմազգ կերպարների պատկերասրահով ընդգծեց, որ աշխարհի բոլոր ժողովուրդները հանրա մարդկության հավասարաբար մասնակիցներն են, պարտադր են ապրել խաղաղ ու համերաշխ: Նա գուգակեց ժառանգականության ու միջավայրի գործոնները՝ ընդգծելով, որ ինքը հայ է արյունով և ամերիկացի՝ միջավայրով, որ ինքը հայ է, քայց կալիֆորնիան իր տունն է, իր ծննդավայրը, որին խորապես կապվել է Հայաստանի և Բիթլիսի չափ:

Հետաքրքիր մի երանգ է նշմարվում Վ. Սարոյանի գեղագիտական մտածողության և ստեղծագործության համապատկերում: Այստեղ նա համեմատության կողմերն ինքն է և հայալեզու արվեստագետները: Եթե մարդն ինչվով արարող հայ գրողներն ազգայինից են մտնել համամարդկային ոգու աշխարհը, ապա Վ. Սարոյանը համամարդկային ոգին բերել և միաժամանակ է հայոց ոգուն: Դրանում նրան օգնել է իր հավատը մարդու հանդեպ, ինչպես ինքն է խոստովանում. «Ես կը հավատամ մարդու բարության: «Ես կը հավատամ, որ մարդու ճակատագիր-ուժք ազնվական ճակատագիր է: Ես կատնեմ այն ուժերը, որոնք կրճատեն կործանել մարդու ազատությունը»:

Վ. Սարոյանը ծնվել է 1908-ին, ԱՄՆ կալիֆորնիա նահանգի Ֆրեզնո քաղաքում, Արմնույան Հայաստանի Բիթլիս քաղաքից գնացած հայ ընտանիքում: Սարոյան-գրող

մակրման մեջ մեծ դեր են խաղացել ինքնակրթությունը, ամերիկյան ու համաշխարհային գիտնականության ընթացումը, հարազատ ժողովրդի եզզնոր մշակույթի, ավանդույթների, աստվածության տարրերի ժառանգումը, հայկական շրջապատի ազգային ինքնատիպությունը:

Առաջին անգամ տպագրվել է 1933-ին, Բուստոնի «Հայրենիք» շաբաթաթերթում՝ Սիրակ Վոլանտի ստորագրությամբ: Լայն ճանաչում է ձեռք բերել «Ժիզալս պատահանի թռչող ճոճաճողի քսն ու այլ պատմվածքներ» առաջին գրքով (1934թ.): Գրախոսելով այդ ժողովածուն՝ ամերիկյան քննադատ Բ. Ռասկոն գրել է. «Ի՞նչն է եստկանշնական Սարդյանի համար՝ որպես գրողի: Սարդյանը բառն է, պողոկանն էլ խելացի, նա թախմուտ է, քնքուշ ու մարդկային, նա միամիտ է լուսնում, սակայն բնավ միամիտ չէ... Նա ասում է դաժանությունն իր թուրը դրսևորումներով, նա ետրզում է մարդկային արժանապատվությունն ու հպարտությունը»¹:

Վ. Սարդյանը գրական ասպարեզ մտավ միանգամից: Գրական կյանքի առաջին տարիներին նա հիմնականում գրել է պատմվածքներ, որոնց մեծ մասն ամփոփել է «Ներշնչում և արտաշնչում» (1936), «Փորրիկ երեխաներ» (1937), «Ողջո՛ւյն քեզ, սեր» (1939), «Իմ անունը կուտն է» (1940), «Միջրեյի փորրիկ» (1973) «Ասորին և այլ պատմվածքներ» (1949), «Ողջ ասպարեզ» (1956) ժողովածուներում:

Վ. Սարդյանի հաջողությունը պատմվածքի ժանրում աննախընթաց էր: Միայն 1934-1962թթ. ընթացքում ուղիղ վեց անգամ նա ստացել է կարճ պատմվածքի համար սահմանված Օ՝ Տիբիի անվան նշանավոր մրցանակները: Պատահական չէ նաև այն հանգամանքը, որ այդ զատվածքների պատումներն ստացել են «սարդյանական ոճ» որակովը:

Վ. Սարդյանը խիզախաց նաև վիպագրության ասպարեզում՝ գալիքին հանձնելով «Ունիսի անտոնի արկածները» (1941), «Ռոք Վահրամ» (1951), «Հայրիկ, դու խնայո՛ւ նա» (1952), «Մայրիկ, նա սիրում են քեզ» (1957), «Չմեծելու համար» (1963), «Օրիոր կյանքի և մահվան կամ փախուստ ռեպի լուսին» (1970) գործերը, ինչպես նաև «Մահազգը» (1979) մահախոսականների շաբաթաթերթումը ու այլ երկեր:

Համաշխարհային թատերգության անթառամ էջերը դարձան Վ. Սարդյանի «Իմ սիրտը մեծերում է», «Քո կյանքի ժամերը», «Ն՛մ, ո՞վ կա», «Սովյալները», «Տարեկանի արտում», «Գինգ-գանգ խաղազողները», «Կոտորածն անմեղաց», «Ներսուսած մի գնա» և այլ դրամատիկական երկեր:

Իր պատմվածքներով, նորավեպերով, վիպակներով ու վեպերով նա վարպետորեն ներմուծել է տեղի ու ժամանակի իրողության հետ սերտորեն կապված սոցիալ-հոգեբանական թարմ ընկառնիկա, արդիական հնչողություն ունեցող մարդասիրական բարոյական մտոնկեր, ռատոմի նոր ձևեր, քնարականությամբ ու հումորով լի հնչերանգներ, բնականություն և ճշմարտացիություն, պատկերների ու կերպարների գունազուգություն: Վ. Սարդյանի գրական շատ կիրառները ներկայացնում են հայկական միջավայրը՝ ազգային ավանդույթներով ու բարերով: Վարենիքի մտոնիչ, ինչպես և նրա դարավոր ավանդույթները պատկանող մարդկանց կիրառները հակադրվում են ապրելակերպի համահարթեցնող չափանիշներին: Իրականության հետ նույնախիսի հարաբերության մեջ են «տարօրինակ» ու ժախող մայրկանց սարդյանական կիրառները: Դրանք համաշխարհային գրականության մեջ մտել են որպես հուզու մարդության նորերդանշան: Իրականության և երգանքի հակադրության, անհատի ներքին ազատության և հոգևոր գեղեցկության, սիրո և բարո հաստատման մտոնկերն են մարմնավորված Սարդյանի արձակում, որոնք հետաքրքրական լուծում են ստացել նաև նրա դրամաներում:

1942թ. Վ. Սարդյանը գորակազվել է բանակ, աշխատել զինվորական սցենարների ստեղծման վրա: Նա պատերազմն ընկալել է որպես աղետ, այդ թեման արտացոլել «Մարդկային կատաղերգություն» վիպակում և «Վեյսի Ջեկսոնի արկածները» վեպում: 1950-1960-ական թթ. Սարդյանն ապրել է Եվրոպայում, ապա նորից հաստատվել ԱՄՆ-ում: Այդ տարիներին ինքնակենսագրական նյութի օգտագործումով ստեղծել է հոգեբանական վիպակների շարք:

1960-ական թթ. սկսած գրել է հուշագրական ժանրի գործեր: Հատկապես ուշագրավ են Բ. Օռոյին, Չ. Չապլինին, Թ. Լ. իտաին, Ե. Չարնցին և ուրիշ հսկաների նվիրված էջերը, հեղինակի մտքում մնելիք գրականության կոչման վերաբերյալ:

Վ. Սարդյանը մահացել է 1981թ. մայիսի 16-ին, Ֆրենկոյում, աճյունի մի մասը թաղված է Երևանի Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում:

Վ. Սարդյանն ստեղծագործել է ավելի քան 50 տարի՝ մտրկությանն ընծայելով 70 նատրներ, որոնցում ընդգրկված են հարյուրավոր մնայուն պատմվածքներ, վիպակներ, վեպեր, պիեսներ, քնարական-ինքնակենսագրական և հուշագրական արձակ գործեր: Անվանի գրողը գրական ասպարեզ է իջել Ամերիկայի համընդհանուր ճգնաժամի տարիներին: Այդ

ժամանակաշրջանում զեղարվեստական գրականության մեջ նկատելի դարձան սոցիալական բողոքն ու գայլույթն արտահայտող երկերը հասարակական կացութեամբ տիրող անարդարության, անբարոյականության, դաժանության և այլ արատավոր երևույթների խնդրանադատությունը: Սարոյանն ընթացավ դեմոկրատական գրականության մարտուղիով, կանգնեց մարդկային իրավունքների պաշտպանության դիրքերում: Հրաժարվելով մարդկային կյանքում գոյություն ունեցող ողբերգական իրավիճակների նկարագրությունից՝ Սարոյանն ընտրեց կենսահաստատ ու լուսավոր նրանզենի՝ դրանց միաձուլվելով ծիծաղ, բարություն, հումոր: Ամերիկյան կյանքի ճշմարտացի պատկերման հետ մեկտեղ նա հոյակվեց նաև իր «հայրենիքի կարոտը», նրա առաջավիճակ ավանդույթները կյանքի բոլոր բնագավառներում: Հռչակավոր արվեստագետը պարզապես կյանքն ընկալում էր բանաստեղծորեն: Ստեղծագործելիս նա իրեն զգում էր ազատ, ուշադրություն չէր դարձնում ժանրային բնորոշված օրենքներին ու կանոններին: Դրա շնորհիվ էլ հենց իր գրական մուտքից ներկայացավ որպես ծնւավորված, ինքնատիպ գրող: Սակայն միաժամանակ նրա ստեղծագործական ձևագիրն ասնչված էր համաշխարհային գրականության հայտնի դեմքերի՝ Մուպասանի, Չեխովի, Անդրսոնի և այլ հանճարեղ ավանդույթներին:

Վ. Սարոյանի ստեղծագործական ուղին բաժանվում է չորս փուլի՝ հետևյալ արդյունքներով. պատմվածքներ (1934-1939), թատերական երկեր (1939-1943), վեպեր (1943-1962), ինքնակենսագրական գործեր և խոսհագրություններ (1963 թվականից մինչև մահը): Սակայն այս բաժանումը կարելի է համարել պայմանական, որովհետև 1950-1960-ական թթ. նա գրել է նաև պատմվածքներ:

Ուսումնասիրելով ամերիկյան սարոյանագիտության ընթացքը՝ նկատվում է, որ ժամանակին գրախոսել են նրա համարյա բոլոր գործերն ու առանձին նշանակալից երկերը: Իհարկե, ողել են Ե՝ դրվատների խոսքեր, Ե՝ միտումնավոր ժխտումներ, սակայն ընդհանրության մեջ նա համարվել է երևույթ ոչ միայն ամերիկյան, այլև համաշխարհային գրականության մեջ: Ընդգծվում է, որ Վ. Սարոյանը 1930-ական թթ. ամերիկյան զեղարվեստական խոսքի նոր հուն բացողներից է, որ նա իր նկատելի նպատակն է քննել նաև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ստեղծված գրականությանը՝ քարոզչական մարդափրություն, լավատեսություն, ատելություն՝ մարդկությանը վիշտ ու ցավ պատճառող չար ու ծերի հանդեպ: Սարոյանը գնահատվեց որպես Մարդ որոնող ու գտնող արվեստագետ, որպես ժողովուրդները համերաշխության ջատագով: Բարձրաձայնվեց, որ Սարոյանը ստեղծել է պարզ մարդու կերպարը՝ ներկայացնելով ազնիվ ու գործարար ամերիկացուն՝ ինչ գույնի և որստեղից էլ հայտնված լինի:

Վ. Սարոյանը ստեղծել է իր ոճը խոստափելով ավանդական ձևերից ու օրինաչափություններից, զգուշանալով ուրիշներին կրկնելուց: Դա հնարավորություն տվեց նրան պատուհի բոլոր ձևերում իրեն դրսևորել որպես ինքնատիպ գրող, որպես ինտու հեքիաթասաց սնցյալը ներկային ու ներկան աբաբային շաղկապող մարգարե: Սակայն նա չչարձավ «Մի կա հակառակ չարին» պատգամի բարոյախոս:

«Ձեր կյանքի ժամանակը» դրամայում չարության դեմ նա հնչեցնում է իր գայլույթը՝ «Արհամարհիք չարիքն ու անազնությունը, բայց ոչ չար ու անազնիվ մարդկանց: Մի՛ ամաչիք բարի ու բնքուշ լինել, բայց հենց որ կյանքիդ որևէ ժամին վրա հասնի սպառնություն գործելու պահը, գործիք այդ սպառնությունն ու մի՛ զղջա: Լյանքիդ ժամերն ապրիք այնպես, որ քեզ բաժին ընկած ժամերին չավելացնես աշխարհի վիշտն ու տառապանքը, այլ ժպիտով ընդունես... անսահման լույսն ու խորությունը»:

Վ. Սարոյանի համար հավասարագոր են բոլոր ազգերը: Նա չընկրկեց աշխարհի չար ու ծերի կարծիքների աջին, որդիաբար ու արդարամտորեն ներկայացրեց Հայաստանն ու հայը խարազանեց նրա երդյալ թշնամիներին, գավի ճիչ դարձրեց Հայոց մեծ եղենքը, ժխտեց գեղասպանությունը՝ աշխարհի որ մատում էլ այն տեղի ունենա:

Քիբալի, հարուստ ու բարձրարժեք է Վ. Սարոյանի գրական ժառանգությունը համաշխարհային մշակույթի գանձարանում: Գեղազուն ու մտածող Վ. Սարոյանը գոյափիլիսոփայության արմատները հստակում են իրն ու նոր ժամանակների փիլիսոփայական համակարգերին՝ առանձապես 19-20-րդ դարերի գրողների և փիլիսոփաների զարգացմանը: Վ. Սարոյանը ինքն է հաստատել. «Շնորհիվ Անդրսոնը, որ ազել է Հեմինգուեյին՝ ազել է ինձ: Ես սիրում եմ Շնորհիուն, նրա մասին գործեր են գրել: Միքում նա նաև Ջեյմս Ջոյսին, որին Ամերիկայում ոչ ճշ չի կարող հավասարվել: Նա խորունկ գետ է, Հրազդան, որ անցնում է մարդկանց կյանքի և երագի միջով»:

Մարդկանց կյանքի և նրազի մասին արդյանական փիլիսոփայությունը ներածել է նաև արդյունաբերական կենտրոններում ու գաղափարաբանությունը: Ավադունիկոս Ս. Սարինյանը նշում է, «Վիլյամ Մարոյանի գեղարվեստական աշխարհը ներկված է հայկական գույներով, լայն նրա պատկերներում հայը ոչ այնքան Սփյուռքի միավոր է, որքան՝ ամերիկացի: Այսպես նա նաև ճապոնացին, մեքսիկացին, ասորին, շոտլանդացին: Մրանք մասնիկներն են ամառաշաքարային մի խառնարանի, որը կոչվում է ամերիկյան հասարակություն: Բայց ես նրանցից յուրաքանչյուրն իր մեջ, որպես հավերժական հուշ, կրում է Էջնիկական ոգու արարչական փոփոքը...»: Միաժամանակ անվանի գրականագետն ընդհանրացնում է. «Ականավոր գրողի արվեստը գագաթնայիններն աղմուկում են հայ գաղափարաբանության երմնադրությունից»:

Ս.Սարինյանի այս դիտարկումը մեզ տանում է «Մաունա ծեր» ժողովրդական պոեզիաների լայն գաղափարների աշխարհը, որ իրենց հենտ Ֆրեդոն մե տարել նրա ծնողներն ու եղբայրները, որոնց միջավայրում մոր կաթի հետ անցել են Մարոյանին ու դարձել արյան անոթ: Չնոսանանք, որ Մարոյանը 3 տարեկանում գրկվել է հորից, որ նրա մանկությունն անցել է Երասնոցում, ճակատագրով դարձել որսագամ մի իմաստուն ժողովրդի ժառանգորդ: Կամենաստությունն այստեղ չի կազում: Որբությանը հասավ ասած այրը վերջին հաշիվ դառնում է չարությունը ժխտող, բարությունը հաստատող իմաստասեր: Մարոյանի լավատեսությունն ու բարությունն առաջին հերթին իրեն են փոխանցվել մայր ժողովրդից՝ դանախով համոզվույն, սնունդով ստանալու խոսքի շտախոս ու հավատ: Պատահական չէ, որ Մարոյանի բարությունն ու անկողնայինները խոսքի ուղիներին են վերաձգվել ոչ միայն մեծերի կամար ստեղծած երկնում, այլև մանկությունը ներկայացնող ստեղծագործություններում:

Վերև նշեցինք, որ Վ. Մարոյանի ստեղծագործությունը անընդմեջ եղել է ամերիկյան պոետականագիտության և քննադատության ուշադրության կենտրոնում: Այս տեսակետից շատ բարձր կարող են նախանձել նրան: Մարոյանի մասին տպագրված մեծագրությունների ու աշխատությունների թիվը հասնում է 50-ի: Այդ հետաքրքիր գործընթացին մասնակցել են այնպիսի նշանավոր գրաքննադատներ, արվեստի մեծագույն Քալիֆոռնիայի համալսարանի Վալդեմար Ֆուրտեր, Լոյվալթ Թոբերը, Դավիդ Խերոլան, Նոնա Քալաբրյանը և այլք: Բազմ ժողովուրդ, մասնավոր էջերում տպագրված գրախոսությունների ու հոդվածների քանակը 150-ից ավելի է:

Վ. Մարոյանի կարտուն ու սերը Հայաստանի, այսինքն՝ հայոց ոգու հանդեպ եպոպոսիցին ոչ անայն նրա ստեղծագործության մեջ, այլև շրջափնի դարձան նախնիների երկրի պեղծելու արդյունքում: Նա Հայաստան այցելել է 1935, 1960, 1976 և 1978թթ.: Դրանք սուկ ֆիզիկական հոսանքներ չէին: Մասկվայում նրա հանդիպումը Էդիշ Զարենցի հետ, նրա մտերմական զրույթները Գուրգեն Մահարու, Հրանտ Մաթևոսյանի, Վահագն Դավթյանի, Ռազմիկ Դավթյանի և որիչ գործիչների հետ նախ սիովիկ են մեծ գրողին ևն ավա հարստագրել հայ աշխարհայինները՝ որպես նոր սերունդ մի կողմից ամերիկյան արձակի, մյուս կողմից՝ նրա կրթության պատմության մեջ: Այստեղից էլ՝ այն հետաքրքրությունը, որ ծնվացել է Մարոյանի սերնդի և նրա ստեղծագործության հանդեպ:

Ամերիկյան կեն դար է՝ Հայաստանում տպագրվում են Մարոյանին նվիրված հոդվածներ, հուշագրություններ, գրախոսություններ, էսսեներ, որոնց հեղինակների շարքը մեջ են Գ. Սեակը, Գ. Մահարին, Հ. Մաթևոսյանը, Վ. Դավթյանը և որիչներ: Ուշագրավ են գրականագետներ Ար. Գրիգորյանի, Լ. Մկրտչյանի, Լ. Հախվերդյանի, Ս. Գուրաբյանի և այլոց մեծարանքի նյութները նախապես: Նկատելի են ողջունելի են թարգմանիչների ջանքերը: Այս առումով դրվատանքի արժանի է թարգմանչուհի և գրականագետ Նատալյա Գոնչարի կատարած գործը: Հայաստանում թարգմանվել ևն հրատարակվել են հուշակավոր գրողի վիպակներն ու վեպերը, նրա իտալագրություններից առանձին հատվածներ, քնարական էսսեները, իր քանի պիեսներն ու ռուսերեն պատմվածքները: Հայ ընթերցողին թանկագրվել նվել է Վ. Մարոյանի ներկերի չորս շատրոպեր, որի հայերեն թարգմանությունն իրականացրել են Ն. Գոնչարը, Վ. Գրիգորյանը, Ա. Տոխանիսյանը, Կ. Սուրենյանը, Գ. Հախվերդյանը, Խ. Հրաչյանը, Հր. Մաթևոսյանը, Խ. Դադունցը, Գ. Էմինը, Զ. Բալայանը, Ռ. Ղազարյանը և այլք: Մարոյանի ներկերի չորս հատորները անագրել են Ն. Գոնչարը և Ֆ. Սելիանը: Վ. Մարոյանի մասին իր աշխատիչ խոսքը է ստել նախնի պոետ Վ. Դավթյանը: 4-րդ հատորը ներառվելում է Նատալյա Գոնչարի «Վ. Մարոյանի լուսնը ու ստեղծագործությունը» ծավալուն ու հագեցած հոդվածով: Ի դեպ, լուրջ ուսումնասիրություն է Ն. Գոնչարի այն աշխատությունը Մարոյանի մասին, որ գեղարվեստ է «Այդատահմանյան գրականության պատմություն» քուհական ձևաարկում (1985): Մեծ գրողի ստեղծագործությունների մասին գրվում են ատենախոսություններ: Տարիների ընթացքում լայն են

ընծայվել Ն. Գոնչարի «Վ. Սարոյանը եւ իր պատմվածքները» աշխատությունը (1976), Բ. Սանդյանի սարոյանական դրամատուրգիան բնութագրող «Մեծ քիթխցու առեղծված» հետազոտությունը (1998), Ա. Զվերնի՝ Վ. Սարոյանի ամբողջական ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրությունը (1962): Այս ամենի մոտ խրատումսնիք երեւոյթ էր երեւանի և Արմավանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Ափյուռ» գիտատնտեսական կենտրոնում զոււարթված միջազգային գիտաժողովը՝ Վ. Սարոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ (2008թ. հոկտեմբերի 14-15-ը), որի ընթացքում զեկուցումով հանդես եկան բուհի ուկտոր Ա. Ղուկասյանը («Բազման խոսք»), ՀՀ գրողների միության նախագահ Լ. Անանյանը («Վ. Սարոյանի կերպարը «Հայկական նազգրության մեջ»), ամերիկահայ բանասեր Օշին Քնիշյանը («Վ. Սարոյանի նպատր ամերիկյան գրականության եւ հայության» գրականագետներ Ս. Դանիելյանը («Գեղեցիկ սպիտակ ձիււ ամառ», կերպարների հոգեբանական քննություն»), Ա. Դոլովսեյանը («Ամերիկյան մեծ գրողը հայկական ոգով»), Գ. Նազարյանը («Վ. Սարոյան. Հարյուրից հավերժություն մի քայլ է»), Ա. Հակոբյանը («Վ. Սարոյանի պատմվածքների ժանրային առանձնահատկությունները»), Վ. Փիլոյանը («Վ. Սարոյանը՝ Հրատ Մաքեռայանի գնահատմամբ»), Լ. Մուրաֆյանը («Թատերագիր Վ. Սարոյանը եւ առնչությունները հայ թատրոնի հետ»), Գ. Հարությունյանը (100-ամյա նրկխան»), Ե. Կարապետյանը («Քննադատական մտածողության զարգացման իննամասնիկը Վ. Սարոյանի ստեղծագործություններում»), Հ. Մուսայելյանը («Մարդու իմաստարանական խնդիրը Վ. Սարոյանի ստեղծագործություններում»), Բ. Գալստյանը («Գոյափիլիսոփա Վ. Սարոյանը»), Գիտաժողովում ելույթներ են ունեցել նաեւ մի խումբ ուսանողներ:

Վերոնշյալներն իրավունք են վերապահում Հայաստանը համարել համաշխարհային սարոյանագիտության առաջատար երկրներից մեկը, որը ջանում է մասսայականացնել մեծ արվեստագետի ստեղծագործությունը:

Մանկության թեման ակնառու տեղ է գրավում Վ. Սարոյանի ստեղծագործության մեջ: Ճիշտ է, այդ հարցին անդրադարձել են որոշ աշխատություններում, սակայն առայսր առանձին ուսումնասիրության առարկա չի դարձել: Ձեռնամուխ լինելով «Մանկության թեման Վ. Սարոյանի ստեղծագործություններում» աշխատության ստեղծմանը՝ մենք նկատի ենք առել Վ. Սարոյանի այն նրկներն ու պատմվածքների շարքերը, որոնցում անմահ գրողը շոշափել է մանկության տարիների քաղցր ու դառն, ամեն դեպքում՝ անմոռանալի օրերի ընթացքը: Դրանք առանձին պատմվածքներ, վիպակներ ու վեպեր են, հանրահայտ դրամաներ, ոչոնք բնագրան են աշխարհի տարբեր թատրոններում, ինչպես նաեւ գրողի հուշագրությունները առնչված մանկության ու պատանեկության տարիներին:

Վ. Սարոյանի արժարժած խնդրո առարկա թեման հրամայական է եւ այսօրվա, եւ վաղվա համար: Նրանցում զաղափարական խորքով ու զեկարկնատական ինքնատիպության պատկերված են մանկության հուզաշխարհն ու հոգեկան երանցները:

Պետք է խոստովանել, որ առաջին անգամ է նման թեման ուսումնասիրվում ամբողջությամբ մեջ: Ուստի կարելոքում ենք սույն աշխատության արդիական, գործնական արժեքը՝ Վ. Սարոյանի մանկության թեման շոշափող ստեղծագործությունները սերտ առնչություններ ունեն համաշխարհային թե՛ դասական եւ թե՛ գրողի ապրած ժամանակաշրջանի գրական նվաճումների հետ:

Այդ համապատկերի վրա առաջին հերթին հետաուտ ենք եղել Սարոյանի գրական ժառանգության իմնական միտումների՝ անդրադառնալով նաեւ այն զնահատականներին, որ տրվել են գրողի նրկներին: Մեզ հետապնդողը հռչակավոր գրողի մանկության թեման արժարժող ստեղծագործության զարգացմանն առնչվող գիտական հայացքների ու հետաույթունների ամբողջությունն է, գրողի գեղարվեստական խոսքի դերի ու նշանակության խորքային ընկալումը թվում է, թե՛ այն կհետաքրքրի գիտահետազոտական, բուհական, կրթական բոլոր ոլորտներին, ինչպես նաեւ ընթերցողների լայն շրջանակներին: Այս համոզմունքը թեկադրել է մեզ պարզ պատկերացնելու մեր նպատակն ու խնդիրները, այն է՝ դիտարկել, վերլուծել, զնահատել կարելոք ելակետներն ու ձեռքբերումները՝ համաշխարհային, առաջին հերթին, ամերիկյան գրականության համապատկերի վրա, որոնք բնութագրական են Վ. Սարոյանի եւ նրա ժամանակակից գրողների ստեղծագործություններին:

Նետամուտ լինելով աշխատանքին՝ մեզ հուզել է թեմայի մշակվածությունը եւ մեր բնկնից գիտական նորությունը: Առաջին հերթին ձգտել ենք խնդրո առարկա թեման արժեքավորել մեր ընկալմամբ եւ մեկնակետով: Մեր ուսումնասիրության նորությունը համարում ենք Վ. Սարոյանի թեմային առնչվող նրկների ստեղծագործական եւ գործնական նշանակության ընդգծումն ու

արթնբավորումը՝ ուշադրության կենտրոնում պահելով այդ ստեղծագործությունների ժողովրդական ու հարստացումը պայմանավորող ուղիները դրանք սերտորեն կապելով թե՛ ԱՄՆ-ում և թե՛ մեր ժողովրդի կյանքում տեղի ունեցող պատմական-ճակատագրական նշանակություն ունեցող իրադարձությունների հետ:

Մեր սույն աշխատության տեսամթերքային հիմքը մեթոդաբանական սկզբունքների անսխալ կիրառումն է: Երևույթներն ուսումնասիրել ենք գրականության զարգացման կոնկրետ շրջանի մեջ՝ նկատի ունենալով պատմամշակութային և աշխարհայնության սերտ կապությունները: Այստեղ մեզ օգնել են հարմարմունքային ու տարածաշրջանային, համագրման, բնագրման և համեմատական վերլուծությունների գիտական մեթոդները: Սակայն այս ամենի մեջ ավելի ձգել է պատմափոխկապակցված հայեցակետը, որը և հնարավորություն է տվել համարել նրանք վերլուծել և գնահատել կյանքի ընթացքի ստեղծագործությունների, դարաշրջանի ստեղծած բազմաբանգ կապերի առնչությունը:

Վ. Սարոյանը համոզված է եղել, որ միշտ ընդգծել է, որ գրողը գրում է ոչ թե պատմվածքներ կամ վեպեր, այլ «միակ մի գիրք»: Հայտնի է, որ նա ստեղծագործել է տարբեր ժրագրերով և բոլոր տարիքում դրանք իր ինքնատիպ տաղանդը՝ գնահատվելով թե՛ ընթերցողների և թե՛ գրական հասարակության կողմից: Եվ ստացվել է այնպես, որ աշխարհառաջակ գրողն իր կյանքի ստեղծագործությունն էր և տարբեր գեղարվեստական ժանրերի: Թեպետ նրա ստեղծագործական անուշադարձը բաժանվել է չորս էտապի՝ ելնելով որևէ ժանրի գերակշռությունից, մենք պատկահաղար էնք գտել մեր աշխատանքը բաժանել ժանրային սկզբունքներից ելնելով նրանցից «Մանկությունը Վ. Սարոյանի պատմվածքներում», «Մանկությունը Վ. Սարոյանի վեպերում ու վնասներում», «Մանկությունը Վ. Սարոյանի դրամաներում»:

Գրականագետ Դ. Նազարյանը Վ. Սարոյանին նվիրված գիտաժողովում իր գեկուցման մեջ կառնել է. «Վիլյամ Սարոյան. Հարյուրից հավերժություն մի քայլ է»:

Թող զենախի հավերժություն տանող սարոյանական ճանապարհին իմ գիտական աշխատանքը հանարվի մի ծաղիկ, որից զգացվի անմահ գրողի նրկելի այն անսոցանելի բույրը, անմոռվությունը նվիրում է մանկությանը լինի՝ այն դասն, թե՛ որսվալով:

Резюме

В данной статье представлены жизнь и творческий путь великого писателя В. Сарояна. Отмечается значение и место его творчества в истории мировой литературы XX века. Указывается, что благодаря его мастерству, он занимал свое место в ряду таких знаменитых писателей, как Э. Хемингуэй, У. Фолкнер, Т. Вульф и другие.

Ссылаясь на его высказывания, отмечается, что язык творчества В. Сарояна – английский, страна, где он прожил – Америка, а дух – армянский. Одновременно указывается, что темы творчества писателя исчерпаны как из жизни американцев, так и из жизни своего, армянского народа, проживающего в Эрзено после геноцида армян в Османской Турции в 1915г.

Գրականություն

1. «Սարոյանի ճշմարտության նտևից»-«Մփոտը» գիտատեսական կենտրոն, Եր., 2009, էջ 23:
2. «Մփոտքի գրողները սովորաբար գրականություն ստանի» Եր., 1980, էջ 163:
3. Ինտերնետի էջերից՝ «Սարոյան Վիլյամ Կրմնակի» հայ գրող, էջ 1:
4. Վ. Սարոյան, Երկեր 4 հատորով հ. 2, Եր., 1987, էջ 43:
5. Վ. Սարոյան, Պատմվածքներ, հարգապայգեք, հատներ, հուշեր, Եր., 1999, էջ 193:
6. Սարինյան, Հայոց ազգային գաղափարախառնություն, Եր., 2005թ, էջ 184:

ԹԱՄՈՅԻ ԿԵՐՊԱՐՈ ՂՍՏ Խ.ԴԱՏԵՆՆՅԻ «ՃՈՂԻՇԻԱՆ» ՎԵՊԻ

Ս. Ս. Բաղդասարյան

Խաչիկ Դաշտենցի «Ստղծան» վեպի հետաքրքիր կերպավորումների մեջ իր ուրույն տեղն ունի ջրաղացապան Թամոյի կերպարը, որով հեղինակը հաստատում է, որ պատմական Մասունը կորսված երկիր չէ միայն, այն Մասնա ծեփի հայրենիքն է, ևտրենացու, Մաշտոցի, Դավթ Անհաղթի ծննդավայրն է: Այնտեղ հիշատակներ կան, թանկ ու սուրբ գերեզմաններ... Հայրենիք, որի ամեն մի քարը Մահյանի պատկերավոր բառով՝ *ապուպացու էր*, իսկ ամեն մի ձող ու բարձունք՝ մի-մի հուշարձան: Թամոն բարձրահասակ էր, արտահայտիչ խոշոր աչքերով, ոտքից մինչև գլուխ այլուրի հաստ շերտով ծածկված, այնպես, որ նույնիսկ թույն երկայն թարթիչները սպիտակին էին տալիս այլուրից: Հաստ գլուխովր գոտու մեջտեղը խրված էր ծխախոտի տուփը իսկ ձեռնափով գրկել էր ծխատորճը, որի կրակը կարգավորում էր կարճ, մագոտ թթամատով աչքը միշտ պահելով Շովասարի վրա: Թամոն անցյալի հիշատակները պահող կենդանի լեզու էր, կենդանի մի հուշարձան, որ ապրում է հայկական ժողովրդական էպոսի հիշատակներով: Թամոյի միջոցով պատմական ասքը պայմանական թվերով միանշարժվում է իրական կյանքի պատումին: Հիշտ է, նրբեմն առասպելական գրույցների ցոլքերով են գունավորվում Մոշոն ու Շովասարը, Դավթի ջրաղացը, Դավթի հուռը, Դավթի և Խանդութի գերեզմանները, Խանդութի ծամերը, որ կախված են բերդի աշտարակից դճալի անդունդ... Թամոն մի հասարակ ջրաղացապան է ով ապրում է հայկական էպոսի ավանդույթներով, վիպական հերոսների հուշերով: Նա այդ բիրտ աշխարհում հայտնագործել էր իր էպիկական աշխարհը և ապրում է այդ փորրիկ աշխարհի օրենքներով, որի տերն ինքն էր:

«Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը» գրքում, ծանոթանալով գրողների տարբեր դիրքորոշումների, նրանց ստեղծագործական նրևակայության վերաբերյալ հարցնիրն, ընթերցում ենք. «Ընդհանրապես գրողի ստեղծագործական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա գեղարվեստական նրևակայության գեղագիտական աշխարհը սերվում է նրնք հիմնական աղբյուրներից: Դրանք հեղինակի՝ ընալ իրականությունից ստացած տպավորություններն են, որոնք արդյունք են սեփական դիտողականության ու կենսավործի, ապա գրական-գեղարվեստական, գիտական աղբյուրները և ժողովրդական բանահյուսությունը»:

Ընթերցելով Դաշտենցին՝ հաստատում ենք, որ նրա գեղագիտական աշխարհը նույնպես սնվել ու սերվել է այդ երեք հիմնական աղբյուրներից, որոնք և բարձրացնում են նրա ստեղծագործության գեղագիտական արժեքը, առաջադրած հարցերի հրատապության ու երկից ստացած գեղարվեստական հաճույքի աստիճանը, ժողովրդի հիշողությունը մշտապես պահելու ձգտումը, հայի կենսունակության հավերժության հաստատումը:

Առանձնապես գրողի ժողովրդական բանահյուսությանը դիմելը հետևանք է կյանքի լայն իմացության, գրողի լայն աշխարհայեցողության: Հայ ժողովրդի ներկան հենվում է անցյալի վրա, իսկ գրողի համար ժողովրդի անցյալի ճանաչողությունն ու գնահատությունը կենսական անհրաժեշտություն է, նորը կերտելու լավագույն պայման:

Դաշտենցը անձամբ Թամոյին չէր տեսել, սակայն գիտեր, որ նրա նախատիպը՝ Թամա Դավթյանը հռչակված էր Թալիհի շրջանում և համարվում էր հայկական էպոսի ամենաստույգ և ամենահռչակված ասացողը:

Ինչպես նշել է անվանի գրականագետ Ա.Եղիազարյանը. «Ժողովրդական բանահյուսության մեջ տիրապետողը, ինչպես հայտնի է, կողմնորակ հայացքն է աշխարհի նկատմամբ: Կողմնորակ հայացքի կրողը և արտահայտիչը նույնպես անհատներն են ասացողները, պատմողները»²:

¹ «Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը», Երևան, 1976, էջ 98:

² Ա.Եղիազարյան, «Գեղարվեստական պատում», Երևան, 1986, էջ 79:

Դաշտենցը, որպես կոլեկտիվ հայացքի կրող, ստեղծել է Թամոյի հրաշալի կերպարը, որին հանդուժում են շրջապատի բոլոր մարդիկ՝ մեծից փոքրը: Ամեն մի ավանդություն, որովհետև վայր, իր կամ երևույթ՝ սրբություն է Թամոյի համար: Նրա ջրաղացը բաց էր բոլոր աշխատավորների առաջ, օգնում և կարեկցում է նրանց: Նա միաժամանակ իր անդամների պատմում է Մասնա ծոնրի պատմությունը, պատմում է ներշնչված, ամենայն հավատարմությամբ: Նա ասես հայ աշխատավորի ամբողջական կերպարներից է, որ դարերի ընթացքում հանել և սերտունդներին է հանձնել հայ ժողովրդի անմահ ստեղծագործությունը՝ հայ ազգական էպոսը:

Դաշտենցը իր հերոսին կերտել է իր ուզածի պես՝ նրա մեջ տեսնելով ժողովրդի ժողովրդությունը, ազգային դեմքը, հոգեկան հարստությունը: Այդ հարստությունը գալիս է անսահման էպոսից: «Իսասհակյանը հավաստում է,- գրել է Հասմիկ Աբելյանը,-որ մեր ոչ մի հերոս անբան խորը չի շոշափվում հայության ոգին, որքան «Մասունցի Դավթի» մեջ, որ ինքնիշխան է ժողովրդի հոգեբանությամբ ու հոգույն համաձայն, ուր բարավառ է նրա սիրտը, որովհետև ազգած է նրա հոգին»¹:

Դաշտենցը վկայում հաճախ է անդրադառնում էպոսին՝ այնտեղ գտնելով հայ ազգայնության մեջ շոշափված հիմնական թեմաները և ամենից առաջ պայքարը ժողովրդի կյանքի և արտաքին թշնամիների դեմ:

Ցանկացած ժողովրդական էպոս մեկ հերոսի պատմություն չէ, այլ մի ողջ գերդաստան: Դաշտենցը Մասնա ծոնրի կյանքում շատ մեծ տեղ է գրառել: Հերոսները ձևավորվում են իրենց հերթին ընտանեկան միջավայրում, բայց էպոսում ընտանիքի դեր է կատարում նաև ժողովրդը: Այսինքն Մասնա հերոսները և ժողովուրդը ապրում են նույն օրհնքներով ու տառապանքներով, նույն հոգևերով ու ուրախություններով: Հերոսը նույն նախապետական-հայրենասեր սովորություններով է կազմվում նաև հերոսի և իրենց ընտանիքին չպատկանող հայրանքի հետ: Ամենաբնորոշը արտաձայնը պառակտի դրվագն է, որը որպես ավագ, փորձառու հերոսներ է Դավթին, իսկ վերջինս էլ կրտսերին վայել խոնարհությամբ լսում է, ու ամենից վերաճում է ժողովրդի, Մասնա տան հետ: Տվյալ դեպքում պատակի դերը կատարում է Մամն:

Մասնա հայրենաշունչ աշխարհում Թամոն ապրում է մի ուրիշ կյանքով, որ չէին կարող ակնարկել շատերը: Ավանդական այդ հողին, նա ապրում էր այդ աշխարհի խորհուրդներով և համար օրենքի ու ժողովրդի կարգ ու կանոնով: Նա գտնել էր իր կենցաղային խորհուրդը, և նրա անսահման խոստովանությունը հանգում է ավանդությունների պահպանման, այն ավանդույթներով, որոնք ընթացաբար սկզբունքին: Այստեղ ոչ միայն իրական հայրենիքն է, այլև՝ հոգևորը, այն, ինչ որ համար ավելի մեծ խորհուրդ ունի, քան իրական հայրենիքն է: Թամոյի հոգում ծայր էր ելել մի ցավագին սնր. հայրենիքը կա և չկա, ինքը այդ սուրբ հայրենիքի տերն է, բայց և տերը չէ: Ու դեռ ավելին՝ իր գլխի տերն էլ չի: Մնալով ռեալիստական հավաստիության անձնաներում՝ Դաշտենցը բերում է կերպարի յուրատեսակ բանահյուսական մեկնություն՝ արքային հասարակ մարդուն բարձրացնելով էպիկական հերոսի բարձունքը:

Չսուր ավանդության ճակարակն գյուղը շինել է Մասունցի Դավթի: Այդ գյուղի ժողովրդական էր Թամոն, որն իր ծագումը կապում է ճնճափորիկի հետ: Պատմում են նաև, որ այդ ջրաղացպանը պանդխտության գնալիս՝ Հալեպի ճանապարհին, իբրև թե, տեսնել էր այն քաղաքի բարր, որ Դավթի Մարութա սարի գագաթից արատափկով շարտել էր Մարա գործի անկից» (Լջ 31):

Բացի շրջակա գյուղերի հայերի հատիկը աղալուց, Թամոն եկվորներից սասնո բարբառով ապրում էր Մասնա ծոնրի պատմությունը ճյուղ առ ճյուղ, քանի որ ամբողջ էպոսը անգիր պետք էր: Ճակարականցի Թամոն այնքան հայտնի մարդ էր, որ նրա մասին գեղեցիկ երգ էր կառվել:

Ծովասարի լանջին շինված
Մեր հին ջաղաց, Դավթի ջաղաց,
Թամոն էնտեղ աչուր կաղա,
Դավթի բարը հա՛ կխաղա:
Պատերն ալրոտ, սյունը դեղնած,

¹ Աբելյան, «Իսասհակյանը և ժողովրդական էպոսը», Երևան, 1975, էջ 31:
² Այն և թնագրի մյուս մեջբերումները կատարված են Խ.Դաշտենցի «Մոռվեցան» գրքից, Երևան, 2004:

Թամոն էնտոզ կնփո՞ բաղարջ,
Ու մինչև լույս հավախտսին
Քնզ կբատումն Դավթի մասին:
Օտերն էնտոզ, աշխարհն էնտոզ
Իր անունն է՝ ճայրական զնզ (էջ 32)¹:

Դաշտոնեցը բաժնեղծել է պատմող, էպոսի ասացող Թամոյի կերպարը, որը նրան հնարավորություն է տալիս նկարագրվող դեպքերի հաճելի ունենալ ներքին տնտեսկում: Դա գրողին նկարագրության է տալիս ոչ թե վեր կանգնել հերոսներից, այլ դառնալ նրանցից մեկը, նրա ժամանակաշրջան, տարածական, էպոսային դիրքորոշումը համընկնում է գործող անձանց դիրքորոշմանը:

Երբ ասաջին անգամ խողեղանը մտնում է ջրաղաջ, Թամոյի առաջին գործն է լինում ցույց տալ գոռացող ջրաղաջաբողիքը, որոնցից մեծը՝ տակի քարը, Դավթին է մնջրով ձողից հանել, դրա համար հազար տարի է անցել, բայց ոչ մաշվել կա, ոչ կտանվի: Պատերիս նստած ղեղին ալրափոշին Թամոյի համար նշխարք էր, քանի որ Դավթի աղոսնից է մնացել: Ձարմագոտ խողեղանին նա բացատրում է. »Ասաջ Դավիթը աղաց, հետո Ձնեով Օհանը, հետո Քնո՞ Թորոսիկը, հետո՞ մյուսները« (էջ 34):

Ջրաղաջաբող խողեղանին ցույց է տալիս նաև Դավթի բերդը, իսկ մինչև Դավթի, խառնուրթի և մյուսների գերեզմանները ցույց տալը՝ դիմում է հովվին. «Տանի՛ր զդակը, լա՛մ, Ջոջանց տան հանգստարանը ծածկված գլխով չեն մտնի» (էջ 37): Թամոն մեկ առ մեկ ցույց է տալիս Առյուծաձև Մհերի, Ձնեով Օհանի, Քնո՞ Թորոսի, Ճնճղափորիկի գերեզմանները:

«Տայտնի է, որ առեհասարակ էպոսները հյուսվում են հայրենիքի, հայրենի նրկրի պատմության կերևորագույն իրադարձությունների մասին, դրսի, օտար աշխարհի իրադարձությունները էպոսին հնուսրբորում են միայն այնքանով, որ կապված են հայրենիքի ճակատագրի հետ: Պատումի կենտրոնը սեփականն է, հարագատը: Եվ այս հանգամանքը այնքան կարևոր է, որ իր արտահայտությունն է գտնում նրբեմն պատմող-ասացողի և էպոսի հերոսների ուղղակի ազգակցական կապի նկատմամբ հավատի մեջ», - այսպես է գրել հայտնի գրաբանադաս Ա.Նոյիսյանը իր «Էնդալվատական պատում» գրքում²: Թամոն իրեն համարում է Ճնճղափորիկի, իսկ խողեղանին ուղղակի կապում է Դավթի ճյուղի հետ: Իսկ ալիքի ճիշտ՝ սատուցի բոլոր հովիվները, ժանչաբաններն ու արհեստավորները Սասնա ծեփի հետնորդներն են՝ ժառանգած նրանց բոլոր առաքինությունները:

Մեծ արհավիրքի օրերին Թամոն Անդրկի լեռներում արիաբար կռվում էր թուրքերի դեմ: Հսկայամարմին ծերունիս հուսահատության մեջ էր. մեկ-մեկ ընկնում էին Սասունի քաջերը՝ անմահությանը ու փառքով պսակելով իրենց անուններն ու փառքը: Թամոյին բզկտում էին մտքերը. «Քո անունը սրբազան զբերով է դրոշմված մեր աշխարհի պատմության մեջ և մեր ժողովրդի սրտում: Քո լեռների միջից դուրս եկան մեր ռազմի և զնդեցկության բոլոր աստվածները և քո կայսնադրուրի փրփուրներից կլավ մեր Զուռլիկ Տալալին: Իսկ այժմ մի՞թե հազվադրքի մեջ նա, մի՞թե պիտի հատնես դու, ո՛վ նվիրական երկիր» (էջ 320): Հնուավոր անգլայի ռուսանտիկական և դաժժան ներկայի պատկերների հակադրությամբ են ստեղծված Թամոյի ապրումները:

Վեպում, զուգակցելով առասպելականն ու պատմականը, հեղինակն օգնում է ընթերցողին՝ գտնել վեպի ճշմարիտ կենտրոնը՝ գաղափարական բարձրակետը. դա հայ ազգային կյանքի պատկերն է, հայ մարդկանց ոգու փրկիստփայության իմաստավորումը, նրա անպարտելիությունը: Ժողովրդական ոգին անմահ է. նա գտնվում է հավիտենական նորագնան և իմաստության մեջ, այդ ոգու առաջ անգոր է անմարդկային, վայրենի արգելքը:

Ժողովրդի հիշողության մեջ ապրում են նախնիների՝ հերոսությունները, և պարսպությունները, ազգային ավանդությունները, բայց հնուարքիսրի այն է, որ այդ հիշողությունն ուղիված է գալիքին, որը միշտ վառ է պատմում հույան այդ մարդկանց մեջ:

Թամոն, դիմելով մեր նախնիների հեռավոր անցյալի պատմության հերոսական դրվագներին, արտահայտում է հայրենիքի կենսունակության համար քայտաբող նշանակություն ունեցող՝ հային հայ պահելու հիմնական գաղափարը: Նրա կյանքի խորհուրդը բարւո և առաքինության սերմեր ցանկում մեջ էր, ժողովրդական ավանդությունների հավատարմի մնալու մեջ: Նշանավոր ջրաղաջաբանի իմաստուն խորհուրդները լսելու, աղունն աղալու հետ

¹ Մեջբերումները կատարված են բնագրից՝ Ն.Դաշտոնեց «Ճողեղան», Երևան, 2004:

² Ա.Նոյիսյան, »Գնդալվատական պատում«, Երևան, 1986, էջ 81:

ասան Մասնա ծնրի քաջագործությունների պատմությունները լսելու համար մարդիկ գալիս են հատուկ այդ ջրաղացը: Ահա թե ինչու և՛ Խողմզանը, և՛ մյուս ծանոթները Թամոյի հետ պատմում էին պատկառանքով:

«Դաշտնեցն ամբողջացրեց առաաւելը սասունցիների վերջին սերնդի, որը ոտքի ելավ ճանքնու նախնյաց ավանդը՝ Բրաբեթն ծաղիկը և կորսվեց այդ մոզական ծաղկի որոնումների ասնակով բավիղներում: Այդ սերունդը էպոսի վերջին ճյուղն էր, վերջին շառավիղը, որ խռովեց աշխարհի անիրավ կարգից և նրան-նրան ուղղվեց Ազատաբար՝ ապավինելու իր խնամառութեան պապին»:¹ - այսպես է արտահայտվել սասունցիների վերջին սերնդի մասին բանասեր վարդաբանը:

